

**Առևտրի ֆինանսավորման ստանդարտ
պայմաններ**

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայաստան ՓԲԸ

1. ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ	3
ԲԱԺԻՆ 1 – ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
2. ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ (ԱՄՊ) ԿԱՆՈՆՆԵՐԸ	4
3. ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱԿՐԵԴԻՏԻՎ	4
4. ԳՈՐԾԻՔՆԵՐ	9
5. ԻՆԿԱՍՈ	12
6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	12
7. ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐԿԵՐ	14
8. Ապրանքնեքի ԲԱՅԹՈՂՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ, բեռնափոխադրման երաշխիքնեք ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐ	16
ԲԱԺԻՆ 2 – ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ, ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	18
9. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	18
10. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ	19
11. ԳՐԱՎ	20
12. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐ	21
13. ՀԱՇՎԱՆՑՈՒՄ	22
14. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	22
ԲԱԺԻՆ 3 – ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	23
15. ՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	23
16. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	24
ԲԱԺԻՆ 4 – ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ	26
17. ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ	26
18. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	28
19. ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ	31
ԲԱԺԻՆ 5 – ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ	33
20. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ	33
21. ՀԱՐԹԱԿՆԵՐ	35
ԲԱԺԻՆ 6 – ԱՅԼ	37
22. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈԿՈՒՄ	37
23. ԲԱՅԱՀԱՅՑՈՒՄ, ԳԱՂՏԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	40
24. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	42
25. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆ	44
ԲԱԺԻՆ 7-ՍԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	44
26. ՍԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	44
ԵՐԿՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ	52

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍՏԱՆՈՒՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ)

1. ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Սույն Պայմանները կիրառվում են ցանկացած Առևտրի Ֆինանսավորման Ծառայությունների նկատմամբ, որոնք Էյչ-Էս-Բի-Սի-ին (այսուհետ՝ «HSBC») կարող է տրամադրել Հաճախորդին կամ կարող է տրամադրել Հաճախորդի անունից: Սույն Պայմանները ներառում են տվյալ Երկրի ցանկացած համապատասխան պայմանները:

1.2. Սույն Պայմանները, կիրառելիության դեպքում, կարգավորվում են նաև HSBC-ի կողմից Հաճախորդին ժամանակ առ ժամանակ մատուցվող ծառայություններին առնչվող այլ պայմաններով (ներառյալ ցանկացած բանկային ծառայության կամ հաշվի սպասարկման պայմանագիր): Առևտրի Ֆինանսավորման ցանկացած Ծառայության կապակցությամբ սույն Պայմանների և ցանկացած այլ գործող պայմանների միջև որևէ հակասության դեպքում՝ պայմանները կիրառվում են հետևյալ առաջնահերթությամբ.

(ա) Դիմում,

(բ) Վարկային պայմանագիր (առկայության դեպքում) և/կամ գործող Ապահովման միջոցի(գրավի) պայմանագիր (առկայության դեպքում),

(գ) Երկրի պայմանները (առկայության դեպքում),

(դ) սույն Պայմանները, և

(ե) նման այլ պայմաններ:

1.3. HSBC-ին Հաճախորդին Առևտրի Ֆինանսավորման որևէ Ծառայության վերաբերյալ որևէ խորհրդատվություն չի տրամադրում: Թեև HSBC-ին կարող է ժամանակ առ ժամանակ տեղեկատվություն տրամադրել կամ կարծիքներ հայտնել, որոնք չեն առաջարկվում որպես խորհուրդ: Առևտրի Ֆինանսավորման որևէ Ծառայությունից օգտվելու համար դիմելուց կամ այն ընդունելուց առաջ Հաճախորդը պետք է կատարի այնպիսի հարցումներ և գնահատումներ, որոնք նա նպատակահարմար է համարում այդ կապակցությամբ, և Հաճախորդը չպետք է ապավինի HSBC-ին, որպեսզի վերջինս խորհուրդներ կամ առաջարկություններ տրամադրի: Եթե Հաճախորդը կասկածներ ունի Առևտրի Ֆինանսավորման որևէ Ծառայություն հարցում, Հաճախորդն ինքը պետք է դիմի անկախ մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար:

1.4 Առևտրի Ֆինանսավորման յուրաքանչյուր Ծառայություն առանձին և անկախ է այն Առևտրային գործարքից, որին առնչվում է տվյալ Առևտրի ֆինանսավորման ծառայությունը, և HSBC-ին որևէ կերպ չի առնչվում նման Առևտրային գործարքի պայմաններին կամ պարտավորված չէ դրանցով, եթե նույնիսկ որևէ փաստաթղթում հղում է կատարված Առևտրի Ֆինանսավորման տվյալ Ծառայությանը:

1.5. HSBC-ին կարող է նշել, հրահանգել կամ ընտրել ցանկացած թղթակից բանկ (ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած անդամի), որը կհանդիսանա Առևտրի ֆինանսավորման տվյալ Ծառայության հետ կապված թողարկող, ծանուցող,

ներկայացման կամ հաստատող բանկը (և կարող է սահմանափակել, որպեսզի նման թղթակից բանկը լինի ԷյՋ-Էս-Բի-Սի Խմբի անդամ կամ HSBC-ի համար ընդունելի որևէ այլ թղթակից բանկ) և իրավասու է թողարկել հանդիպակաց երաշխիք կամ հանդիպակաց պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ (ՊՓԱ) HSBC-ի կողմից սահմանված ձևաչափով և բովանդակությամբ՝ հոգուտ թղթակից բանկի: HSBC-ին կարող է ցանկացած թղթակից բանկին վճարել կամ վերջինիցս ստանալ վճարումներ, միջնորդավճարներ, վճարներ կամ այլ վճարումներ:

1.6. Սույն Պայմանները չեն պարտադրում HSBC-ին որևէ պահի Առևտրի Ֆինանսավորման Ծառայություններ մատուցելուն/տրամադրելուն:

ԲԱԺԻՆ 1 – ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ (ԱՄՊ) ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1. Եթե Հաճախորդն այլ բան չի պահանջում (և HSBC-ին չի համաձայնվում նման պահանջին՝

(ա) HSBC-ի կողմից բոլոր Փաստաթղթային Ակրեդիտիվները թողարկվում են՝ համաձայն Փաստաթղթային Ակրեդիտիվի Միասնականացված կանոնների և սովորույթների (2007թ. վերանայում, ԱՄՊ հրատարակություն թիվ 600 (ՄԿՍ/UCP600)), և եթե դա պահանջվում է HSBC-ի կողմից Փաստաթղթային Ակրեդիտիվի Միասնականացված կանոնների և սովորույթների (ՄԿՍ/UCP600) Էլեկտրոնային ներկայացման հավելվածի (ԷՄԿՍ/eUCP),

(բ) բոլոր ՊՓԱ-ները HSBC-ի կողմից թողարկվում են՝ համաձայն 1998թ. Միջազգային Պահուստային ակրեդիտիվների ստանդարտների (1998թ., ԱՄՊ հրատարակություն թիվ 590 (ՄՊՍ/UCP98)),

(գ) բոլոր մուրհակները ու երաշխիքները HSBC-ի կողմից թողարկվում են՝ համաձայն Ցպահանջ Երաշխիքների Միասնականացված Կանոնների (ԱՄՊ հրատարակություն թիվ 758 (ՑՊԵՄԿ/URDG758)),

(դ) բոլոր Բնկասոները իրականացվում են՝ համաձայն Բնկասոների Միասնականացված Կանոնների (1995թ., ԱՄՊ հրատարակություն թիվ 522 (ՀՄԿ/URC522)) և, եթե դա պահանջվում է HSBC-ի կողմից՝ Բնկասոների Միասնականացված Կանոնների (ՀՄԿ/URC522) Էլեկտրոնային ներկայացման հավելվածի (ԷՀՄԿ/eURC),

յուրաքանչյուր դեպքում կարող են ժամանակ առ ժամանակ վերանայվել (բոլորը միասին ԱՄՊ կանոններ), իսկ Հաճախորդների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են կիրառելի ԱՄՊ կանոններով՝ ի լրումն սույն Պայմանների:

2.2. Առևտրի միջազգային պալատի կանոնների և սույն Պայմանների միջև որևէ հակասության դեպքում սույն Պայմանները գերակայում են:

3. ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱԿՐԵԴԻՏԻՎ

3.1. Սույն Կետ 3-ի պայմանները կիրառվում են ցանկացած Փաստաթղթային ակրեդիտիվի նկատմամբ:

3.2. Հաճախորդը.

(ա) պարտավորվում է ուսումնասիրել HSBC-ի կողմից թողարկված յուրաքանչյուր Փաստաթղթային ակրեդիտիվի հաճախորդի օրինակը՝ վերջինիս համապատասխանությունը սովյալ Դիմումին ստուգելու համար, և

(բ) համաձայնվում է HSBC-ին անհապաղ տեղեկացնել դրա բովանդակության վերաբերյալ որևէ առարկություն ունենալու մասին:

Ներմուծում

3.3. HSBC-ն իրավասու է բավարարել և վճարել Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ներկայացված ցանկացած Պահանջ, որն արտաքննապես(ընդհանուր առմամբ) համապատասխանում է իր պայմաններին, և/կամ Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո կազմված (կամ, ենթադրաբար, կազմվող) Փաստաթղթերին՝ ըստ իր պայմանների, առանց Հաճախորդին կամ որևէ այլ կողմի հղում կատարելու կամ նրանց կողմից լիազորություն ստանալու, և առանց հարցում կատարելու, թե արդյոք Պահանջը պատշաճ կերպով է կազմվել և չնայած այն հանգամանքին, որ ցանկացած Պահանջի վավերականությունը կամ գումարի չափը կարող է լինել վիճելի: Հաճախորդը ցանկացած նման Պահանջ ընդունում է որպես սպառիչ ապացույց առ այն, որ HSBC-ն պարտավոր էր բավարարել և վճարել այն, և դրա ներքո կամ կապակցությամբ HSBC-ի կողմից կատարված ցանկացած վճարում կամ ձեռնարկված ողջամիտ քայլ պարտադիր է Հաճախորդի համար:

3.4. Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո որևէ Փաստաթղթի ներկայացումը համարվում է Փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններին համապատասխան, եթե HSBC-ն որոշում է, որ դրանք պատշաճ են և ամբողջությամբ համապատասխանում են Փաստաթղթային ակրեդիտիվի պահանջներին: Հաճախորդը հրաժարվում է ցանկացած ուշացման համար HSBC-ին որևէ պահանջ ներկայացնելուց, որը պայմանավորված է նման Փաստաթղթերի ուսումնասիրության կամ դրանց թերությունների հետ կապված ցանկացած հնարավոր անհամապատասխանության բացահայտման հետ:

3.5. Չնայած Հաճախորդի կողմից հակառակ հրահանգի՝ HSBC-ն կարող է մերժել ցանկացած Պահանջ, որն ըստ HSBC-ի չի համապատասխանում սովյալ Փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններին: HSBC-ն պարտավոր չէ Հաճախորդին տեղեկացնել կամ Հաճախորդից ստանալ հրաժարում որևէ անհամապատասխանության համար՝ նախքան Պահանջի մերժումը: Եթե որևէ անհամապատասխանության կապակցությամբ HSBC-ն ստանում է Հաճախորդի հրաժարումը ապա նման գործողության ձեռնարկումը HSBC-ին չի պարտավորեցնում ցանկացած այլ անհամապատասխանության դեպքում ստանալ Հաճախորդի հրաժարումը:

3.6. Եթե HSBC-ն Հաճախորդին տեղեկացնում է Պահանջի կապակցությամբ անհամապատասխանության մասին, և Հաճախորդը խնդրում է HSBC-ին և/կամ իր թղթակից բանկին կամ իր գործակալին.

(ա) կատարել վճարում Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո՝ չնայած անհամապատասխանությունը, կամ

(բ) հաստատել կամ թողարկել անհամապատասխանությունը ծածկող որևէ երաշխիք կամ վնասի հատուցման պարտավորություն,

Հաճախորդը հաստատում է, որ Կետ 9-ում սահմանված իր փոխհատուցման և վնասի հատուցման պարտավորությունները (*ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ*) կիրառվում են նման Պահանջի և/կամ երաշխիքի կամ վնասի հատուցման պարտավորության նկատմամբ:

3.7. HSBC-ն, ցանկացած պահի, իր նպատակահարմարությունից ելնելով, կարող է փոփոխել կամ լրացուցիչ պայմաններ ներառել Փաստաթղթային ակրեդիտիվում՝ պայմանով, որ նման փոփոխությունը կամ լրացուցիչ պայմանները չավելացնեն Հաճախորդի՝ տվյալ Փաստաթղթային ակրեդիտիվի հետ կապված պարտավորությունները: HSBC-ին՝ շահառուի համաձայնության առկայության դեպքում, կարող է չեղարկել ամբողջ Փաստաթղթային ակրեդիտիվը կամ վերջինիս չօգտագործված մնացորդը:

3.8. Չնայած Դիմումում տրված որևէ հրահանգի՝ HSBC-ն իր որոշմամբ կարող է սահմանափակել ցանկացած Փաստաթղթային ակրեդիտիվի հասանելիությունը, կամ որևէ ծանուցումը կամ հաստատումը, սեփական գրասենյակների կամ ցանկացած թղթակից բանկի կամ իր ընտրած գործակալի շրջանակում և, այդ դեպքում, HSBC-ն կարող է հրաժարվել բավարարել կամ վճարել ցանկացած Փաստաթղթի համար, որը կազմվել, կամ ենթադրվում է, որ կազմվել է նման գրասենյակից, թղթակից բանկից կամ գործակալից բացի ցանկացած այլ գրասենյակի, բանկի կամ անձի կողմից:

3.9. Եթե HSBC-ն Փաստաթղթային ակրեդիտիվի համաձայն վճարում է կատարում ևսխաբան այդ Փաստաթղթային ակրեդիտիվի մարման օրը.

(ա) այն դեպքում, երբ Փաստաթղթային ակրեդիտիվի շահառուն պարտավոր է տոկոսները վճարելու համար) Հաճախորդը պարտավոր է Փաստաթղթային ակրեդիտիվի ամբողջ գումարը HSBC-ին վճարել Փաստաթղթային ակրեդիտիվի մարման օրը՝ նույնիսկ, եթե HSBC-ն այդ Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո վճարել է միայն զեղչված գումար, և

(բ) այն դեպքում, երբ Հաճախորդը Փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններով պետք վճարի տոկոսները՝ HSBC-ի հետ ցանկացած այլ համաձայնագրի համաձայն) Հաճախորդը պետք է այդ Փաստաթղթային ակրեդիտիվի մարման օրը կամ HSBC-ի կողմից որոշված ավելի վաղ ժամկետում HSBC-ին վճարի Պահանջի ամբողջ գումարը այդ Պահանջի նկատմամբ հաշվարկված տոկոսների հետ միասին՝ սկսած HSBC-ի վճարման օրվանից մինչև մարման օրն ընկած ժամանակահատվածի համար, ներառյալ HSBC-ի վճարման օրը և մարման օրը, իսկ այդ տոկոսագումարները ենթակա է վճարման՝ համաձայն Կետ 15-ի (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈՎՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ):

3.10. Եթե Փաստաթղթային ակրեդիտիվի պայմանները (ուղղակիորեն կամ ենթադրաբար) թույլ են տալիս, որպեսզի վճարումը շահառուին կատարվի նախքան նման Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ստացումը, Հաճախորդը պետք է նման Փաստաթղթային ակրեդիտիվի մարման օրը կամ HSBC-ի պահանջով ավելի վաղ ամսաթվին, HSBC-ին վճարի Պահանջի ամբողջ գումարը (անկախ նրանից, թե արդյունքում ստացվող Փաստաթղթերը կհամապատասխանեն Փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններին, թե ոչ)՝ այդ Պահանջի նկատմամբ հաշվարկված տոկոսների հետ միասին՝ սկսած HSBC-ի վճարման օրվանից մինչև մարման օրն ընկած ժամանակահատվածի համար, ներառյալ HSBC-ի վճարման օրը և մարման օրը, իսկ տոկոսագումարը ենթակա է վճարման համաձայն Կետ 15-ի (*ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ*):

3.11. Եթե որևէ Փաստաթղթային ակրեդիտիվով սահմանվում է, որ որոշակի կոնկրետ Փաստաթղթեր պետք է շահառուի կողմից ուղղակիորեն ուղարկվեն Հաճախորդին շահառուի կողմից Պահանջը ներկայացնելու ժամանակ կամ դրանից առաջ, նման Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո որևէ Պահանջի հետ կապված մնացած բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն HSBC-ին: Եթե Հաճախորդն օգտագործում է ուղղակիորեն իրեն ուղարկված Փաստաթղթերը Ապրանքների տիրապետումը ստանձնելու նպատակով, HSBC-ն լիազորված է ընդունել տվյալ Փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ներկայացված բոլոր Փաստաթղթերը, վճարել կամ ընդունել դրանք ներկայացման ժամանակ, և մարման օրը վճարել Ապրանքների համար կազմված բոլոր փաստաթղթերի դիմաց՝ անկախ որևէ անհամապատասխանության կամ որևէ այլ հանգամանքի կամ հարցի առկայության, որը կարող էր այլ կերպ ազատել Հաճախորդին կամ HSBC-ին իրենց պարտավորություններից կամ ազդած լինել դրանց վրա: Հաճախորդը հաստատում է, որ Կետ 9-ով սահմանված իր փոխհատուցման և վնասի հատուցման պարտավորությունները (*ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԱՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ*) կիրառվում են HSBC-ի կողմից տվյալ Փաստաթղթային ակրեդիտիվի կապակցությամբ վճարված ցանկացած գումարի նկատմամբ:

3.12. Եթե ըստ որևէ Փաստաթղթային ակրեդիտիվի Ապրանքները պետք է ապահովագրվեն «Ապահովագրական ինստիտուտի բեռների ապահովագրման դրույթներ» պարունակող կամ տվյալ ոլորտի այլ ստանդարտ դրույթներ ներառող ապահովագրական պոլիսների/վկայագրերի համաձայն, HSBC-ն կարող է ընդունել «Ամերիկյան ապահովագրական ինստիտուտի բեռների ապահովագրման դրույթներ» կամ HSBC-ի կողմից նպատակահարմար համարված տվյալ ոլորտի այլ ստանդարտ դրույթներ ներառող ապահովագրական պոլիսներ/վկայագրեր:

3.13. HSBC-ն երբևէ պարտավոր չէ որևէ Փաստաթղթով կամ Ապրանք բաց թողնել Հաճախորդին, եթե Հաճախորդը լիովին չի կատարել տվյալ Փաստաթղթերին կամ

Ապրանքներին առնչվող Փաստաթղթային ակրեդիտիվի հետ կապված իր պարտավորությունները:

3.14. Եթե HSBC-ն թողարկում է մեկ այլ Փաստաթղթային ակրեդիտիվին (**Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվ**) հաջորդող Փաստաթղթային ակրեդիտիվ (**Հաջորդական փաստաթղթային ակրեդիտիվ/ Back -to -back Documentary Credit**), Հաճախորդը.

(ա) ընդունում է, որ Հաջորդական փաստաթղթային ակրեդիտիվի կապակցությամբ Հաճախորդի պարտավորությունները կախված չեն Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվի իրականացումից կամ պայմանավորված չեն դրանով,

(բ) անվերապահորեն և անհետկանչելիորեն, բացառապես HSBC-ին է փոխանցում կամ զիջում Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվի գծով վճարման իր բոլոր իրավունքները,

(գ) չի փոփոխում կամ ընդունում Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվի որևէ փոփոխություն առանց HSBC-ի համաձայնության կամ չի ձեռնարկում որևէ գործողություն, որը կարող է հանգեցնել նրան, որ HSBC-ն չստանա Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ամբողջ գումարը, և

(դ) HSBC-ին իրավունք է տալիս օգտագործել Հաջորդական փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ներկայացված Փաստաթղթերը՝ Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվի համաձայն Պահանջ ներկայացնելու նպատակով՝ անկախ ներկայացված Փաստաթղթերում ցանկացած անհամապատասխանության կամ անճշտության:

3.15 HSBC-ն պարտավոր չէ Հաճախորդին տեղեկացնել Հաջորդական փաստաթղթային ակրեդիտիվի և Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվի միջև որևէ անհամապատասխանության մասին:

Արտահանում

3.16 Եթե HSBC-ն հաստատում է որևէ Փաստաթղթային ակրեդիտիվ կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ (բացահայտվող կամ չբացահայտվող հիմքով) և HSBC-ն վճարումն ամբողջությամբ կամ մասամբ չի ստանում համապատասխան թողարկող բանկից, ապա Հաճախորդից միայն պահանջվում է HSBC-ին փոխհատուցել չստացված գումարները, եթե չվճարումը պայմանավորված է Ռեգրեսի դեպքով: Նման փոխհատուցումը Հաճախորդի կողմից ենթակա է վճարման անմիջապես HSBC-ի պահանջով՝ Կետ 15-ի համաձայն վճարվելիք տոկոսների հետ միասին (*ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ*), և Հաճախորդը HSBC-ին պետք է փոխհատուցի չվճարման արդյունքում HSBC-ի կողմից կրած ցանկացած կորստի կամ վնասի համար:

3.17 HSBC-ն իր հաստատմամբ (բացահայտվող կամ չբացահայտվող հիմքով) պարտավորված չէ, ինչպես նաև պարտավորված չի լինի բանակցելու որևէ Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի կապակցությամբ, եթե այն փոփոխվել է առանց HSBC-ի

համաձայնության, ներկայացված Փաստաթղթերը լիարժեք կերպով չեն համապատասխանում Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններին, Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի բնօրինակները տարբերվում են Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի պատճեններից, որոնց հիման վրա HSBC-ն տրամադրել է իր հաստատումը, Հաճախորդը չի ապահովում սույն Կետ 3-ով սահմանված իր պարտավորություններից որևէ մեկը, կամ էթե թողարկող բանկից վճարումը Ռեգրեսի դեպքի արդյունքում ամբողջությամբ կամ մասամբ չի ստացվել HSBC-ի կողմից (կամ չի կարող ընդունվել HSBC-ի կողմից):

3.18 Եթե HSBC-ն Փաստաթղթային ակրեդիտիվը կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվը հաստատում է չբացահայտվող հիմքով, Հաճախորդը դրանց հետ կապված բացահայտումներ չի կարող ներկայացնել HSBC-ից բացի որևէ այլ անձի, և անհապաղ HSBC-ին պետք է տրամադրի Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի բնօրինակը, ինչպես նաև համապատասխան թողարկող բանկի կողմից թողարկված ցանկացած գործող փաստաթղթեր և փոփոխություններ:

3.19 Եթե HSBC-ն հաստատում է որևէ Փաստաթղթային ակրեդիտիվ կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ (բացահայտվող կամ չբացահայտվող հիմքով), Հաճախորդը.

(ա) անվերապահորեն և անհետկանչելիորեն, բացառապես HSBC-ին է փոխանցում կամ զիջում նման Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի գծով վճարման իր բոլոր իրավունքները, և

(բ) չի ձեռնարկում որևէ գործողություն, որը կարող է հանգեցնել նրան, որ HSBC-ն չստանա Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ամբողջ գումարը:

4. ԳՈՐԾԻՔՆԵՐ

4.1 Սույն Կետ 4-ի պայմանները կիրառվում են HSBC-ի կողմից թողարկված, հաստատված կամ տրամադրված ցանկացած Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի, ցպահանջ երաշխիքի (ներառյալ՝ ավարը, Փաստաթղթի համատեղ ընդունումը կամ ընդունումը), պարտատոմսի, հակընդդեմ երաշխիքի, հակընդդեմ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի կամ այլ նմանատիպ անկախ վճարման պարտավորության նկատմամբ (ներառյալ՝ ցանկացած երկարաձգում, նորացում կամ փոփոխություն) (յուրաքանչյուրը՝ **Գործիք**):

4.2 Հաճախորդը.

(ա) պարտավորվում է ուսումնասիրել HSBC-ի կողմից թողարկված կամ կնքված յուրաքանչյուր Գործիքի Հաճախորդի օրինակը՝ վերջինիս համապատասխանությունը համապատասխան Դիմումին ստուգելու համար, և

(բ) համաձայնվում է HSBC-ին անհապաղ տեղեկացնել դրա բովանդակության վերաբերյալ որևէ առարկություն ունենալու մասին:

4.3 HSBC-ն իրավասու է ընդունել, վճարել կամ բավարարել ցանկացած Գործիքի նկատմամբ ներկայացված Պահանջ, որն արտաքինապես համապատասխանում է իր պայմաններին՝ առանց Հաճախորդին կամ որևէ այլ կողմի դիմելու կամ նրանց կողմից լիազորություն ստանալու, և առանց հարցում կատարելու, թե արդյոք Պահանջը պատշաճ կերպով է ներկայացվել HSBC-ին՝ չճշտելով այն հանգամանքը, որ ցանկացած Պահանջի վավերականությունը կամ գումարի չափը կարող է լինել վիճարկվող: Հաճախորդը ցանկացած նման Պահանջ ընդունում է որպես բավարար ապացույց առ այն, որ HSBC-ն պարտավոր էր բավարարել և վճարել այն, և դրա ներքո կամ կապակցությամբ HSBC-ի կողմից կատարված ցանկացած վճարում կամ ձեռնարկված ողջամիտ քայլ պարտադիր է Հաճախորդի համար:

4.4 Գործիքի ներքո որևէ Փաստաթղթի ներկայացումը համարվում է Գործիքի պայմաններին համապատասխանող, եթե HSBC-ն որոշում է, որ դրանք պատշաճ են և ամբողջական և համապատասխանում են Գործիքի պահանջներին: Հաճախորդը հրաժարվում է ցանկացած ուշացման համար HSBC-ին որևէ պահանջ ներկայացնելուց, որը կապված է նման Փաստաթղթերի ուսումնասիրման կամ դրանց թերությունների հետ կապված ցանկացած հնարավոր անհամապատասխանության բացահայտման հետ:

4.5 Չնայած Հաճախորդի կողմից հակառակ հրահանգի՝ HSBC-ն իրավունք ունի մերժել ցանկացած Պահանջ, որն ըստ HSBC-ի չի համապատասխանում տվյալ Գործիքի պայմաններին: HSBC-ն պարտավոր չէ Հաճախորդին տեղեկացնել կամ ստանալ նրա հրաժարումը որևէ անհամապատասխանությունից՝ նախքան Պահանջի մերժումը: Եթե որևէ անհամապատասխանության կապակցությամբ HSBC-ն ստանում է Հաճախորդի հրաժարումը ապա նման գործողության ձեռնարկումը HSBC-ին չի պարտավորեցնում ցանկացած այլ անհամապատասխանության դեպքում ստանալ Հաճախորդի հրաժարումը:

4.6. Եթե HSBC-ն Հաճախորդին տեղեկացնում է Պահանջի կապակցությամբ անհամապատասխանության մասին, իսկ Հաճախորդը խնդրում է HSBC-ին և/կամ իր թղթակից բանկին կամ իր գործակալին.

(ա) կատարել վճարում Գործիքի ներքո՝ չնայած անհամապատասխանությանը, կամ

(բ) հաստատել կամ թողարկել անհամապատասխանությունը ծածկող որևէ երաշխիք կամ վնասի հատուցման պարտավորություն,

Հաճախորդը հաստատում է, որ Կետ 9-ում սահմանված իր փոխհատուցման և վնասի հատուցման պարտավորությունները (*ՓՈՒՇՀՍՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ*) կիրառվում են նման Պահանջի և/կամ երաշխիքի կամ վնասի հատուցման պարտավորության նկատմամբ:

4.7 HSBC-ն, ցանկացած պահի, իր նպատակահարմարությունից ելնելով, կարող է փոփոխել կամ լրացուցիչ պայմաններ ներառել Գործիքում՝ պայմանով, որ նման

փոփոխությունը կամ լրացուցիչ պայմանները չավելացնեն Հաճախորդի՝ տվյալ Գործիքի հետ կապված պարտավորությունները: HSBC-ն շահառուի համաձայնության առկայության դեպքում, կարող է չեղարկել ամբողջ Գործիքը կամ վերջինիս չօգտագործված մնացորդը:

4.8 Չնայած Դիմումում տրված որևէ հրահանգի՝ HSBC-ն կարող է սահմանափակել ցանկացած Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի հասանելիությունը, կամ որևէ ծանուցումը կամ հաստատումը, իր որոշմամբ, սեփական գրասենյակների կամ ցանկացած թղթակից բանկի կամ գործակալի շրջանակում և, այդ դեպքում, HSBC-ն կարող է հրաժարվել բավարարել կամ վճարել ցանկացած Փաստաթղթի համար, որը կազմվել, կամ ենթադրվում է, որ կազմվել է նման գրասենյակից, թղթակից բանկից կամ գործակալից բացի ցանկացած այլ գրասենյակի, բանկի կամ անձի կողմից:

4.9 Եթե Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի պայմանները (ուղղակիորեն կամ ենթադրաբար) թույլ են տալիս, որպեսզի վճարումը շահառուին կատարվի նախքան նման Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի ներքո ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ստացումը, Հաճախորդը պետք է նման Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի մարման օրը կամ HSBC-ի պահանջով ավելի վաղ ամսաթվին, HSBC-ին վճարի Պահանջի ամբողջ գումարը (անկախ նրանից, թե արդյունքում ստացվող Փաստաթղթերը կհամապատասխանեն Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններին, թե ոչ)՝ այդ Պահանջի նկատմամբ հաշվարկված տոկոսների հետ միասին սկսած HSBC-ի վճարման օրվանից մինչև մարման օրն ընկած ժամանակահատվածի համար, ներառյալ HSBC-ի վճարման օրը և մարման օրը, իսկ այդ տոկոսագումարը ենթակա է վճարման համաձայն Կետ 15-ի (*ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ*):

4.10 Չնայած վերոհիշյալին, եթե Հաճախորդը խնդրել է HSBC-ին թողարկել կամ ապահովել Գործիքի թողարկումն այն թղթակից բանկի կողմից, որի համար պետք է HSBC-ի կողմից թողարկվի հակընդդեմ երաշխիք կամ հակընդդեմ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ, HSBC-ն կարող է հակընդդեմ երաշխիքում կամ հակընդդեմ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվում ներառել այնպիսի պայմաններ, որոնք ըստ HSBC-ի անհրաժեշտ են նման Գործիքի թողարկումն ապահովելու համար: Առանց սահմանափակման, հակընդդեմ երաշխիքի կամ հակընդդեմ Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի վավերականության ժամկետը և Պահանջի ժամկետը (առկայության դեպքում) պետք է լինեն ավելի երկար, քան Գործիքի վավերականության ժամկետը և Պահանջի ժամկետը (առկայության դեպքում), և կարող են ավելացվել այլ պայմաններ՝ արտացոլելու այն օրենքները, որոնց ներքո Գործիքը կարգավորվելու է:

4.11 Եթե որևէ Գործիք նախատեսում է նորացում կամ երկարաձգում, և Հաճախորդը HSBC-ին առաջարկ չի ներկայացնում՝ HSBC-ի կողմից Գործիքով նախատեսվող չեղարկման մասին ծանուցման տրամադրումից առնվազն 5 աշխատանքային օր առաջ, HSBC-ն կարող է նորացնել կամ երկարաձգել ժամկետը

և մեկ տարով կամ այլ ժամկետով՝ ըստ HSBC-ի ընտրության: Այունուամենայնիվ, HSBC-ն պարտավոր չէ թողարկել, երկարաձգել կամ նորացնել որևէ Գործիք, և կարող է ցանկացած պահի:

(ա) չեղարկել կամ հետ կանչել ցանկացած Գործիք՝ առանց նախնական ծանուցում ուղարկելու: Հաճախորդին կամ նրանից թույլտվություն ստանալու, եթե նման Գործիքը կամ վերջինիս շահառուն թույլ է տալիս նման չեղարկումը կամ հետկանչը,

(բ) վճարել ցանկացած Գործիք՝ առանց նախնական ծանուցում ուղարկելու: Հաճախորդին կամ նրանից թույլտվություն ստանալու, եթե Գործիքը կամ որևէ համապատասխան օրենքը թույլ է տալիս կամ պահանջում է վճարում կատարել՝ Գործիքը չեղարկելու, հետ կանչելու, չերկարաձգելու կամ չնորացնելու դեպքում:

4.12 HSBC-ի կողմից որևէ Գործիքի չեղարկումը, վճարումը կամ հետկանչը երբևէ չպետք է սահմանափակի HSBC-ի և Հաճախորդի սույն Պայմաններով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

4.13 Քանի դեռ Գործիքն ուղղակիորեն չի նախատեսում Պահանջի կատարման համար Գործիքի բնօրինակի ներկայացում HSBC-ին, վերջինս կարող է վճարել և/կամ բավարարել ցանկացած Պահանջ՝ անկախ Գործիքի բնօրինակը ներկայացնելու:

4.14 Չնայած Հաճախորդը կարող է պնդել, որ Գործիքը նվազեցվել, չեղարկվել կամ դադարեցվել է, HSBC-ն կարող է որոշել, որ Գործիքը կարգավորող օրենսդրության համաձայն այն չի նվազեցվել, չեղարկվել կամ դադարեցվել, կամ HSBC-ն կարող է որոշել, որ անհրաժեշտ է ձեռք բերել կամ պահանջել համապատասխան շահառուի հաստատումը նման Գործիքի ներքո HSBC-ի և/կամ որևէ թղթակից բանկի պարտավորությունների նվազեցման, դրանցից ազատման կամ դադարեցման համար: Այսպիսի որոշման դեպքում կամ քանի դեռ HSBC-ի կողմից հաստատում ստացված չէ, նման Գործիքը չպետք է դիտարկվի կամ համարվի նվազեցված, չեղարկված կամ դադարեցված:

5. ԻՆԿԱՍՏ

5.1. Սույն Կետ 5-ի պայմանները կիրառվում են Ինկաստ ցանկացած գործարքի նկատմամբ:

5.2 Եթե Հաճախորդը HSBC-ից պահանջել է Ինկաստ իրականացնել՝ որպես փոխանցում իրականացնող բանկ, HSBC-ն պարտավոր չէ Հաճախորդին Ինկաստյի հետ կապված որևէ վճարում կատարել, քանի դեռ HSBC-ն ամբողջ վճարումը չի ստացել հավաքագրող կամ ներկայացնող HSBC-ից:

5.3. HSBC-ն պարտավոր չէ ստուգել Փաստաթղթերը՝ նախքան դրանք հավաքագրող կամ ներկայացնող բանկին ուղարկելը:

5.4. HSBC-ն պարտավոր չէ ստուգել այն փաստաթղթերը, որոնք նա ստանում է փոխանցում կատարող բանկից:

6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

6.1 Սույն Կետ 6-ի պայմանները կիրառվում են այն դեպքում, երբ HSBC-ն ֆինանսավորում է ցանկացած Փաստաթուղթ կամ Փաստաթղթային ակրեդիտիվ:

6.2 HSBC-ի կողմից Փաստաթղթերի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի ֆինանսավորման դեպքում Հաճախորդն անվերապահորեն և անհետկանչելիորեն.

(ա) Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի սեփականության իրավունքը փոխանցում է HSBC-ին և պարտավորվում է համապատասխան փաստաթուղթը հաստատել հոգուտ HSBC-ի (եթե արդեն իսկ հաստատված չէ հոգուտ HSBC-ի՝ որպես նման Ֆինանսավորման պայման) և հաստատված փաստաթղթի բնօրինակն ուղարկում է HSBC-ին,

(բ) Փաստաթղթային ակրեդիտիվից կամ Փաստաթղթից ստացվող հասույթը/եկամուտները ստանալու իր բոլոր իրավունքներն ամբողջությամբ զիջում կամ փոխանցում է բացառապես HSBC-ին, և

(գ) բացառապես HSBC-ին է զիջում կամ փոխանցում առաջնային Առևտրային գործարքից ծագող առաջնային դեբիտորական պարտքերի կապակցությամբ իր ստացականի (և դրանց հետ կապված իրավունքներն ու հասույթը) (եթե այդպիսիք կան) հետ կապված բոլոր իրավունքները, սեփականությունը և շահը,

և եթե Ֆինանսավորման գումարը հաշվարկվել է՝ Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի անվանական արժեքի նկատմամբ նախնական տոկոսադրույք/advance rate/ կիրառելով, HSBC-ի կողմից այդ Փաստաթղթից կամ Փաստաթղթային ակրեդիտիվից Ֆինանսավորման գումարը գերազանցող հասույթ ստանալու դեպքում HSBC-ն այդ հասույթը վճարում է Հաճախորդին (Հաճախորդի չմարված պարտավորությունները հաշվանցելուց հետո):

6.3 Եթե HSBC-ն ֆինանսավորել է որևէ Փաստաթուղթ կամ Փաստաթղթային ակրեդիտիվ, և վճարումն ամբողջապես կամ մասամբ HSBC-ի կողմից որևէ պատճառով չի ստացվել (կամ, չի կարող ընդունվել HSBC-ի կողմից որևէ պատճառով) համապատասխան թողարկող, հաստատող, հավաքագրող, ներկայացնող բանկից կամ վճարողից, դեբիտորից (ինչպես կիրառելի է), ապա եթե HSBC-ի կողմից գրավոր այլ համաձայնություն չկա.

(ա) նման Առևտրային ծառայությունը համարվում է տրամադրված՝ Հաճախորդի նկատմամբ լիակատար ռեզրեսի իրավունքով, և

(բ) Հաճախորդը պարտավոր է HSBC-ին փոխհատուցել չստացված գումարները:

Նման փոխհատուցումը HSBC-ի պահանջով անմիջապես ենթակա է վճարման՝ Կետ 15-ի համաձայն (*ՎԱՐԶԱՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ*) հաշվարկված տոկոսների հետ միասին, և Հաճախորդը HSBC-ին պետք է փոխհատուցի որևէ չվճարման արդյունքում HSBC-ի կողմից կրած ցանկացած կորստի կամ վնասի համար:

6.4 Եթե HSBC-ն համաձայնվել է ֆինանսավորել որևէ Փաստաթուղթ կամ Փաստաթղթային ակրեդիտիվ առանց ռեզրեսի իրավունքի, և վճարումն ամբողջությամբ կամ մասամբ չի ստացվում HSBC-ի կողմից (կամ չի կարող

ընդունվել HSBC-ի կողմից) համապատասխան թողարկող, հաստատող, հավաքագրող, ներկայացնող բանկից կամ վճարողից, դեբիտորից (ինչպես կիրառելի է), Հաճախորդը պարտավոր է HSBC-ին փոխհատուցել միայն չստացված գումարները, եթե չվճարումը պայմանավորված է եղել Ռեզրեսի դեպքով՝ Նման փոխհատուցումն անմիջապես ենթակա է վճարման HSBC-ի պահանջով՝ Կետ 15-ի համաձայն վճարվելիք ցանկացած տոկոսագումարի հետ միասին (*ՎԱՐՁՍՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍՍԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ*), և Հաճախորդը HSBC-ին պետք է փոխհատուցի որևէ չվճարման արդյունքում HSBC-ի կողմից կրած ցանկացած կորստի կամ վնասի համար:

6.5 Այն դեպքում, երբ HSBC-ն ֆինանսավորել է որևէ Փաստաթուղթ կամ Փաստաթղթային ակրեդիտիվ, HSBC-ն կարող է իր հայեցողությամբ.

(ա) բավարարման համար ստանալ պայմանական ակցեպտներ և/կամ ակցեպտներ և/կամ Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի հետ կապված վճարումը կատարելու ժամկետը երկարաձգել,

(բ) մինչև մարման ժամկետը ընդունել վճարում ցանկացած վճարողից կամ ակցեպտորից զիջմամբ կամ զեղչով,

(գ) նախքան մարման ժամկետը ընդունել մասնակի վճարում և Ապրանքները համամանտրեն առաքել նման Փաստաթուղթը կամ Փաստաթղթային ակրեդիտիվը վճարողին կամ ակցեպտորին կամ տվյալ Ապրանքները ստացողին,

(դ) ցանկացած վճարողի խնդրանքով հետաձգել նման Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի ներկայացումը այն վճարելու կամ ընդունելու համար՝ առանց ազդելու HSBC-ի նկատմամբ Հաճախորդի Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի հետ կապված պարտավորության վրա,

(ե) տրամադրել վնասի հատուցման պարտավորություն որևէ անհամապատասխանության արդյունքում ծագող ցանկացած կորստի դիմաց՝ Փաստաթղթի ակցեպտ կամ վճարում ստանալու համար, և Հաճախորդը հաստատում է, որ Կետ 9-ով սահմանված իր փոխհատուցման և վնասի հատուցման պարտավորությունները (ՓՈՒՉԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) կիրառվում են ցանկացած նման հատուցման նկատմամբ,

(զ) վարույթ հարուցել և քայլեր ձեռնարկել նման Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի ակցեպտորներից կամ հաստատողներից՝ նշված փաստաթղթերի կապակցությամբ որևէ գումար բռնագանձելու նպատակով՝ չնայած այն հանգամանքին, որ HSBC-ն Հաճախորդի բանկային հաշվից ելքագրում է կատարել նման Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի գումարի չափով:

7. ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԱՐԿԵՐ

7.1. Սույն Կետ 7-ի պայմանները կիրառվում են ցանկացած Առևտրի ֆինանսավորման վարկերի նկատմամբ, որոնք HSBC-ն կարող է ժամանակ առ ժամանակ տրամադրել Հաճախորդին:

7.2. Համաձայն որևէ գործող Վարկային համաձայնագրի պայմանների, որոնք կարող են կիրառվել, HSBC-ի կողմից Հաճախորդին տրամադրվող ցանկացած Առևտրի ֆինանսավորման վարկ պարտադիր բնույթ չի կրում HSBC-ի համար, և HSBC-ն կարող է նման Առևտրի ֆինանսավորման վարկը դադարեցնել կամ չեղյալ համարել ցանկացած պահի՝ առանց Հաճախորդին որևէ հիմնավորում ներկայացնելու:

7.3. Առևտրի ֆինանսավորման վարկի վրա հաշվեգրվում են տոկոսներ և ենթակա են վճարման՝ համաձայն Կետ 15-ի (*ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ*):

7.4 Հաճախորդը, պահանջի դեպքում, մարում է Առևտրի ֆինանսավորման յուրաքանչյուր վարկ՝ հաշվեգրված տոկոսների և վճարման ենթակա վարձավճարների, միջնորդավճարների, գանձումների և HSBC-ի կողմից կատարած ծախսերի հետ միասին, եթե HSBC-ի հետ այլ գրավոր համաձայնություն չի կայացվել: Ամեն դեպքում, Հաճախորդն Առևտրի ֆինանսավորման վարկը պետք է մարի ոչ ուշ, քան.

(ա) դրա մարման օրը,

(բ) վարկն ապրանքների կամ ծառայությունների ֆինանսավորման համար նախատեսված լինելու դեպքում՝ այն օրը, երբ Հաճախորդը ստանում է այդ ապրանքների կամ ծառայությունների վաճառքից ստացված հասույթը (ամբողջությամբ կամ մասամբ), և /կամ

(գ) վարկը Հաճախորդի նկատմամբ առկա պարտքի ֆինանսավորման համար նախատեսված լինելու դեպքում՝ այն օրը, երբ Հաճախորդը ստանում է պարտքի վճարումը (ամբողջությամբ կամ մասամբ),

(դ) և, HSBC-ի պահանջով, Հաճախորդը կապահովի որպեսզի համապատասխան Առևտրային գործարքի ներքո կամ դրա կապակցությամբ Հաճախորդին վճարվելիք բոլոր գումարները վճարվեն անմիջապես HSBC-ի կողմից սահմանված բանկային հաշվին՝ Առևտրի ֆինանսավորման տվյալ վարկը կամ Հաճախորդի որևէ այլ չմարված պարտավորությունները վճարելու նպատակով:

7.5 Եթե Առևտրի ֆինանսավորման վարկը ենթակա է մարման այն օրը, երբ Հաճախորդն իրավասու է ստանալ գումար մեկ այլ Առևտրի ֆինանսավորման վարկի ներքո, HSBC-ն կարող է պահանջել.

(ա) Մարման ենթակա Առևտրի ֆինանսավորման վարկի գումարը հաշվանցել ստացման ենթակա գումարից,

(բ) Հաճախորդին վճարել միայն գումարների տարբերությունը (եթե այդպիսին կլինի):

7.6 Այն դեպքում, երբ Հաճախորդը դիմում է Առևտրի ֆինանսավորման վարկի համար, որը պետք է ուղեկցվի Փաստաթղթային ակրեդիտիվով կամ հաստատված գնման պատվերով, նախնական հաշիվ-ապրանքագրով կամ Դիմումում նշված նման այլ օժանդակ փաստաթղթով, Հաճախորդը պարտավոր է Առևտրի ֆինանսավորման վարկի համար Դիմում ներկայացնելուց կամ դրանից առաջ,

HSBC-ին ներկայացնել Փաստաթղթային ակրեդիտիվի բնօրինակը (ներառյալ բոլոր փոփոխությունները (եթե այդպիսիք կան) կամ հաստատված գնման պատվերի օրինակը, նախնական հաշիվ-ապրանքագիրը կամ Դիմումում նշված նման այլ հիմնավորող փաստաթուղթ (առկայության դեպքում)՝ յուրաքանչյուր դեպքում HSBC-ի կողմից պահանջվող ձևաչափով (**Հիմնավորող փաստաթուղթ**):

7.7 Այն դեպքում, երբ HSBC-ն Հաճախորդին տրամադրում է Հիմնավորող փաստաթղթով ուղեկցվող Առևտրի ֆինանսավորման վարկ, Հաճախորդը պետք է.

- (ա) օգտագործի այդ Առևտրի ֆինանսավորման վարկի հասույթը միայն Հիմնավորող փաստաթղթում նշված Ապրանքների գնման, արտադրման, վերամշակման, պահեստավորման, ապահովագրման և/կամ վաճառքի կամ փոխադրման նախապատրաստման համար,
- (բ) չընդունի Հիմնավորող փաստաթղթի որևէ փոփոխություն կամ չեղարկում՝ առանց HSBC-ի նախնական գրավոր համաձայնության,
- (գ) անհապաղ տեղեկացնի HSBC-ին, եթե Հիմնավորող փաստաթղթով սահմանված համապատասխան Ապրանքների արժեքը կամ դրանցից ստացվող հասույթը ցանկացած պահի ցածր կլինի Առևտրի ֆինանսավորման վարկի գումարից,
- (դ) անհապաղ տեղեկացնի HSBC-ին, եթե համապատասխան Ապրանքները չեն առաքվում Հիմնավորող փաստաթղթի պայմաններին համապատասխան,
- (ե) այն դեպքում, երբ Հիմնավորող փաստաթուղթը Փաստաթղթային ակրեդիտիվ է, HSBC-ին ներկայացնի բոլորը Փաստաթղթերը՝ Փաստաթղթային ակրեդիտիվի պայմաններին խիստ համապատասխան՝ նախքան Փաստաթղթային ակրեդիտիվում սահմանված ժամկետ(ներ)ի ավարտը, և
- (զ) եթե Հիմնավորող փաստաթուղթը Փաստաթղթային ակրեդիտիվ չէ, անհապաղ համապատասխան Ապրանքների առաքումից հետո HSBC-ին տրամադրի հաշիվ-ապրանքագիր և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են համապատասխան Ապրանքների մատակարարումը համապատասխան գնորդին՝ վաճառքի համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

7.8 Այն դեպքում, երբ HSBC-ն Հաճախորդին տրամադրում է Առևտրի ֆինանսավորման վարկ, որը ուղեկցվում է Փաստաթղթային ակրեդիտիվով, և HSBC-ն անհրաժեշտ Փաստաթղթերը վճարման կամ հաստատման է ներկայացնում թողարկող բանկին և/կամ HSBC-ն ֆինանսավորում է այդ Փաստաթղթային ակրեդիտիվը կամ վերջինիս ներքո ներկայացված ցանկացած Փաստաթուղթ, HSBC-ն իրավասու է այդ Փաստաթղթային ակրեդիտիվից ստացվող հասույթը կամ ֆինանսավորման գումարն օգտագործել այդ Առևտրի ֆինանսավորման վարկը կամ Հաճախորդի ցանկացած այլ չմարված պարտավորություն (ներառյալ հաշվեգրված տոկոսը) մարելու համար:

8. Ապրանքների ԲԱՅԹՈՂՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ, բեռնափոխադրման երաշխիքներ ԵՎ ՎՆԱՄԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐ

8.1.Սույն Կետ 8-ի պայմանները կիրառվում են Ապրանքների բացթողման, բեռնափոխադրման երաշխիքի կամ վնասի հատուցման պարտավորագրի նկատմամբ:

8.2 Եթե Հաճախորդը HSBC-ին դիմում է, որպեսզի վերջինս ստորագրի կամ երկրորդ ստորագրությամբ հաստատի որևէ վնասի հատուցման պարտավորագիր կամ բեռնափոխադրման երաշխիք կամ (ըստ դեպքի) ստորագրի, հաստատի կամ հանձնի որևէ օդաբեռնագիր, նավաբեռնագիր, ծանրոցի փոստային ստացական կամ առաքման պատվեր (միասին՝ **Տրանսպորտային փաստաթղթեր**)՝ Ապրանքների բացթողումը հեշտացնելու համար.

(ա) HSBC-ն իրավասու է (սակայն պարտավոր չէ).

(i) բավարարել բացթողնված Ապրանքներին առնչվող որևէ Փաստաթղթային ակրեդիտիվի, Ինկաստյի կամ որևէ Փաստաթղթի համաձայն ներկայացված ցանկացած Պահանջ (ներառյալ ցանկացած ներկայացված Փաստաթղթի ընդունում), և վճարել Ապրանքի հաշիվ-ապրանքագրում նշված գումարը կամ Ապրանքի արժեքը (որն ավելի բարձր է)՝ առանց ուսումնասիրելու ներկայացված որևէ Փաստաթուղթ և տեղյակ լինելով կամ չլինելով որևէ անհամապատասխանության մասին, և

(ii) օգտագործել HSBC-ի տիրապետման տակ գտնվող ցանկացած Տրանսպորտային փաստաթուղթ՝ ցանկացած վնասի հատուցման պարտավորագիր կամ բեռնափոխադրման երաշխիք մարելու համար, և

(բ) Հաճախորդը պետք է անհապաղ ընդունի համապատասխան Ապրանքների վճարման համար ներկայացված ցանկացած Փաստաթուղթ (անկախ դրա հակասական լինելուց) և փոխհատուցի HSBC-ին և յուրաքանչյուր այլ Փոխհատուցվող կողմի՝ համաձայն Կետ 9.2-ի (ՓՈՒՅՆՍՈՒՅՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ):

8.3 Ապրանքները և/կամ Փաստաթղթերը տրամադրվում են Հաճախորդին Ապրանքները ստանալու և վաճառելու նպատակով:

8.4 HSBC-ն կարող է զիջել, կարգավորել, վճարել կամ հրաժարվել ցանկացած վնասի հատուցման պարտավորագրի, կամ բեռնափոխադրման երաշխիքի թողարկման կամ HSBC-ի կողմից որևէ Տրանսպորտային փաստաթղթի ստորագրման, հաստատման կամ հանձման հետ կապված կամ դրանցից բխող ցանկացած Պահանջից՝ այն կարգով, որը HSBC-ին համարում է նպատակահարմար՝ առանց Հաճախորդին ազատելու HSBC-ին փոխհատուցելու և վնասը հատուցելու պարտավորությունից և պատասխանատվությունից:

8.5 Հաճախորդը պետք է HSBC-ին ազատի և առաքի յուրաքանչյուր վնասի հատուցման պարտավորագիր կամ բեռնափոխադրման երաշխիք (առկայության դեպքում)՝ անմիջապես չեղարկելու նպատակով՝ համապատասխան Տրանսպորտային փաստաթղթերի բնօրինակը ստանալուց հետո:

8.6 Հաճախորդը համաձայնվում է, որ Հաճախորդի իր պարտավորությունները՝ վնասի հատուցման պարտավորագրի կամ բեռնափոխադրման երաշխիքի

կապակցությամբ շարունակում են մնալ ուժի մեջ և չեն նվազում մինչև այդ վնասի հատուցման պարտավորագիրը կամ բեռնափոխադրման երաշխիքը չվերադարձվի HSBC-ին, իսկ HSBC-ն չազատվի նման վնասի հատուցման պարտավորագրի կամ բեռնափոխադրման երաշխիքի ներքո իր բոլոր պարտավորություններից:

ԲԱԺԻՆ 2 – ՓՈՆԶԱՏՈՒՑՈՒՄ, ՎՆԱՄԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

9. ՓՈՆԶԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՎՆԱՄԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

9.1 Հաճախորդը պահանջի դեպքում HSBC-ին փոխհատուցում կամ վճարում է որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ HSBC-ի կողմից ցանկացած անձի վճարված (որևէ եղանակով) կամ վճարվելիք բոլոր գումարները և պահանջի դեպքում HSBC-ին վճարում է վերջինիս նկատմամբ Հաճախորդի ցանկացած պահին ունեցած բոլոր պարտքերը, ներառյալ՝ նման Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ ցանկացած մայր գումար, տոկոսագումար, միջնորդավճար, վարձավճար, Աճող ծախսեր, հարկեր, մաքսատուրք և վճարներ, ինչպես նաև նման Առևտրի ֆինանսավորման ծառայությունների մատուցման կապակցությամբ HSBC-ի կատարած ցանկացած ծախսեր և ծախքեր:

9.2 Պահանջի դեպքում Հաճախորդը HSBC-ին, HSBC-ի խմբի յուրաքանչյուր անդամին, պաշտոնյաներին, աշխատակիցներին և ներկայացուցիչներին (յուրաքանչյուրը՝ **«Հատուցվող կողմ»**) փոխհատուցում է բոլոր ուղղակի, անուղղակի և հետևանքային պարտավորությունները, ինչպես նաև կորուստները, վճարումները, վնասները, պահանջները, հայցերը, ծախսերն ու ծախքերը (ներառյալ իրավաբանական ծառայությունների վճարներն ու վարձավճարները և շահառուի կամ որևէ այլ անձի վարձավճարները, հայցերը, պահանջներն ու պարտավորությունները՝ ամբողջական փոխհատուցման հիմքով), նաև վարույթները, գործողությունները և այլ հետևանքներ (միասին՝ **«Կորուստներ»**), որը ցանկացած Հատուցվող կողմ կարող է կրել կամ ունենալ որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության ներքո կամ դրա հետ կապված, և սույն պայմանների ներքո իր իրավունքները իրացնելիս (բացառությամբ այն դեպքերի, երբ ցանկացած նման Կորուստ պայմանավորված է Հատուցվող կողմի խարդախությամբ, կոպիտ անփութությամբ կամ կանխամտածված սխալ վարքագծով): Հաճախորդը, պահանջի դեպքում, Հատուցվող կողմին վճարում է Կորուստների ամբողջ գումարը:

9.3. Հաճախորդը, ցանկացած Հատուցվող կողմի պահանջով, պետք է անհապաղ ներկայանա և իր միջոցների հաշվին պաշտպանի ցանկացած հայց, որը կարող է հարուցվել ընդդեմ նման Հատուցվող Կողմի կապված որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության հետ, և տրամադրի այնպիսի աջակցություն, որը Հատուցվող կողմը կարող է ողջամտորեն պահանջել:

9.4 HSBC-ն ցանկացած պահի և առանց ծանուցման, կարող է HSBC-ի խմբի ցանկացած անդամի մոտ Հաճախորդին պատկանող բանկային հաշվից պահում

կատարել կամ HSBC-ի մոտ առկա կամ վերջինիս կողմից ստացված Հաճախորդին վճարման ենթակա հատույթից գումար պահել, Հաճախորդի այդ ժամանակ չմարված ցանկացած պարտավորության դիմաց (նույնիսկ, եթե այդպիսի գումարների պահույնը կամ նվազեցումը կհանգեցնի համապատասխան բանկային հաշվի սահմանաչափի գերազանցման):

9.5 Սույն պայմաններով նախատեսված վնասի հատուցման պարտավորությունները որևէ կերպ չեն մարվում կամ նվազեցվում, ինչպես նաև Հաճախորդի պատասխանատվությունը որևէ ազդեցության չի ենթարկվում HSBC-ի կամ որևէ անձի կողմից ժամանակ առ ժամանակ այդ պարտավորությունները փոփոխելու, իրականացնելու կամ դրանցից ազատելու դեպքում, կամ ցանկացած ժամանակ թույլատրելով տարեկետում կամ դրսևորելով ներդրամություն կամ որևէ անձի հետ միավորում, կամ համաձայնվելով ընդունել կամ փոփոխել որևէ փոխզիջում, պայմանավորվածություն կամ լուծում, կամ բաց թողնելով որևէ վճարման պահանջ կամ հարկադիր կատարման դիմում, կամ սահմանելով, փոփոխելով, նվազեցնելով կամ երկարաձգելով ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայության պայմանները, կամ կատարված կամ բացթողնված որևէ այլ գործողության պատճառով, որոնք (բացի այս դրույթից)՝ կարող էին գործել Հաճախորդին պատասխանատվությունից ազատելու կամ այլ կերպ արդարացնելու համար:

10. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ

10.1 Բանկի պահանջով, Հաճախորդը, HSBC-ի կողմից նշված հաշվին պարտավոր է վճարել համարժեք դրամական միջոցներ, որոնք բավարար են Հաճախորդի պարտավորություններն ապահովելու համար, կամ ավելի քիչ գումար, եթե այն համաձայնեցվել է HSBC-ի հետ (նման վճարված գումարը՝ **«Դրամական միջոցներով գրավ»**):

10.2 HSBC-ի պահանջով, Հաճախորդը, HSBC-ի համար բավարար ձևով և բովանդակությամբ HSBC-ին կտրամադրի Կարգավորող օրենսդրական դաշտում ընդունելի ձևով՝ բանկային հաշվի և այդ Դրամական միջոցների գրավի կապակցությամբ ապահովված իրավունքներ, իսկ Հաճախորդը կատարում է այդ ապահովված իրավունքների գրանցումը, հաշվառումը, գրառումը կամ ծանուցումը՝ դրան իրավական ուժ տրամադրելու և Հաճախորդի նկատմամբ պարտադիր դարձնելու համար, ինչպես նաև կատարում է դրանց հետ կապված վճարումներ:

10.3. HSBC-ն ցանկացած պահի, առանց ծանուցման կամ պահանջի, մասամբ կամ ամբողջությամբ Դրամական միջոցների գրավը կարող է օգտագործել (հաշվանցման, փոխանցման կամ այլ եղանակով) ցանկացած Պահանջի վճարման, Առևտրի ֆինանսավորման վարկի մարման և/կամ Հաճախորդի որևէ կամ բոլոր այլ պարտավորությունները մարելու նպատակով:

10.4 Եթե HSBC-ն այլ համաձայնություն չի տրամադրել.

(ա) Դրամական միջոցների գրավը չի կարող հանդիսանալ HSBC-ի կողմից պարտք Հաճախորդի կամ որևէ այլ անձի նկատմամբ և այն չպետք է ենթակա

լինի HSBC-ի կողմից մարման կամ վերադարձման (ամբողջությամբ կամ մասամբ) Հաճախորդին կամ ցանկացած այլ անձի՝ յուրաքանչյուր դեպքում, քանի դեռ և եթե HSBC-ն բավարարված չէ, որ Հաճախորդի բոլոր պարտավորություններն անվերապահորեն և անհետկանչելիորեն ամբողջությամբ վճարված և մարված են, իսկ

(բ) Դրամական միջոցների գրավի վրա տոկոսներ չեն հաշվեգրվում:

10.5 Հաճախորդը չպետք է ստեղծի կամ թույլ տա, որ առաջանա որևէ հիփոտեք, պահանջ, գրավ, կալանք կամ այլ ապահովված իրավունքներ կամ ծանրաբեռնվածություն Դրամական միջոցների գրավի կամ որևէ բանկային հաշվի նկատմամբ, որտեղ պահվում է Դրամական միջոցների գրավը (բացառությամբ հոգուտ HSBC-ի ցանկացած ապահովման) կամ զիջի, փոխանցի կամ այլ կերպ կառավարի նշված գրավը:

11. ԳՐԱՎ

11.1 HSBC-ի պահանջով Հաճախորդը HSBC-ին վճարում է Հաճախորդի բոլոր պարտավորությունները:

11.2 Սույնով Հաճախորդը, այնքանով որքանով թույլատրվում է, պարտավորվում է HSBC-ին, որպես Հաճախորդի պարտավորությունների շարունակական ապահովում գրավադնել բոլոր այն Փաստաթղթերն ու Ապրանքները, որոնք ցանկացած ժամանակ փաստացի գտնվում են կամ կարող են գտնվել HSBC-ի տիրապետման կամ վերահսկողության ներքո կամ պահվում են HSBC-ի հավատարմագրային կառավարման ներքո կամ վերջինիս կարգադրությամբ պահառության, հավաքագրման, երաշխիքի, Պահանջի ներկայացման կամ ցանկացած այլ պատճառով, և անկախ այն հանգամանքից թե նշվածը պայմանավորված է բնականոն բանկային գործառնություններով թե ոչ, արդյոք գտնվում է Կարգավորող օրենսդրական դաշտի երկրում թե այլ երկրում:

11.3 Այնքանով, որքանով պահանջվում է HSBC-ի կողմից, Հաճախորդը պարտավոր է կատարել բոլոր գործողությունները (ներառյալ այնպիսի հետագա փաստաթղթերի կնքումը), Փաստաթղթերի ու Ապրանքների նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները ապահովելու համար՝ գրավը ստեղծելու, ապացույցներ տրամադրելու և այն ամբողջությամբ ուժի մեջ մտցնելու համար :

11.4 Եթե ըստ Կարգավորող օրենսդրական դաշտի պահանջվում է, որպեսզի գրավը (կամ դրա համարժեք միջոցը), գրանցվի, մուտքագրվի կամ այլ կերպ պետականորեն հաշվառվի, որպեսզի այն հնարավոր լինի բռնագանձել, HSBC-ի պահանջի դեպքում Հաճախորդը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ գործողությունները, որպեսզի նման գրավը գրանցվի, մուտքագրվի և/կամ պետականորեն հաշվառվի պահանջվող ձևով (ներառյալ՝ պահանջվող վճարումների կատարումը):

11.5 Ապահովումների համախմբման իրավունքի ցանկացած սահմանափակում չի կիրառվում սույն Կետ 11-ով նախատեսված գրավի նկատմամբ:

11.6 Ցանկացած գրավադրված Փաստաթղթի և Ապրանքի հետ կապված ռիսկերը կրում է Հաճախորդը, և ո՛չ HSBC-ն, ո՛չ էլ HSBC-ի խմբի որևէ այլ անդամ

պատասխանատու չէ HSBC-ի կողմից որպես ապահովում պահվող որևէ Փաստաթղթի կամ Ապրանքի արժեքի որևէ կորստի կամ վնասի կամ արժեզրկման համար:

11.7 Եթե.

- (ա) Հաճախորդը չի վճարում Հաճախորդի որևէ պարտավորություն սահմանված ժամկետում կամ ըստ պահանջի,
- (բ) Հաճախորդը չի կատարում սույն Պայմանների որևէ այլ դրույթ,
- (գ) Հաճախորդի կողմից սույն Պայմանների համաձայն ցանկացած հաստատում , որը կատարվել է կամ համարվում է կատարված, ճիշտ չէ կամ պարզվում է, որ ճիշտ չէ,
- (դ) Հաճախորդն ի վիճակի չէ կամ ընդունում է պարտքերը մարելու իր անկարողությունը սահմանված ժամկետի ավարտին կամ Հաճախորդն իր հիմնադրման երկրի օրենսդրության համաձայն անվճարունակ է կամ սնանկ կամ համարվում է անվճարունակ կամ սնանկ, կամ
- (ե) Հաճախորդը լուծարվում է կամ ենթակա է մեկ կամ մի քանի պարտատերերի հետ միաձուլման կամ այլ կերպ վերակազմավորման, գործունեության դադարեցման կամ գտնվում որևէ այլ սնանկության կամ անվճարունակության գործընթացում կամ վարությամբ ,

11.8 HSBC-ն կարող է իրացնել գրավի նկատմամբ իր իրավունքը և առանց պահանջի, ծանուցման, իրավական գործընթացի կամ Հաճախորդի կամ որևէ այլ անձի նկատմամբ ցանկացած այլ գործողության իրացնել, վաճառել, բանակցել կամ այլ կերպ տնօրինել բոլոր կամ որոշ Փաստաթղթեր ու Ապրանքներ ցանկացած ժամանակ և ցանկացած եղանակով, որն ինքը նպատակահարմար է համարում՝ գերծ որևէ սահմանափակումից և պահանջից, և HSBC-ն պատասխանատվություն չի կրում նման իրացումից, վաճառքից, բանակցությունից կամ օտարումից բխող որևէ կորստի համար:

11.9. HSBC-ի կողմից գրավի իրացման արդյունքում ստացված, վերադարձված կամ այլ կերպ վերականգնված դրամական միջոցները կարող են հաշվեգրվել, տոկոսների վճարմամբ, առանձին ժամանակավոր հաշվի վրա այնքան ժամանակ, քանի դեռ HSBC-ն չի որոշել Հաճախորդի պարտավորությունների ամբողջ ծավալի մարման նկատմամբ իր իրավունքները պահպանելու անհրաժեշտությունը:

12. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՆՈՐՄԱԳԵՐ

12.1 Մինչ Հաճախորդի՝ որևէ Փաստաթղթերի կամ Ապրանքների կապակցությամբ մատուցված որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության հետ կապված որևէ պարտավորություն մնում է չկատարված, և նման Փաստաթղթերը կամ Ապրանքները պահվում են կամ տրամադրվել են Հաճախորդին կամ վերջինիս կարգադրությամբ այլ անձի, Հաճախորդը.

- (ա) պահում է նման Փաստաթղթերը և Ապրանքները (և իրացումից և/կամ ապահովագրությունից ստացված հասույթը) HSBC-ի համար հավատարմագրային հիմքով (կամ եթե հավատարմագրային կառավարումը չի ճանաչվում և ենթակա չէ կիրառման, պահում է ի շահ HSBC-ի) բացառապես

HSBC-ի և Հաճախորդի միջև համաձայնեցված նպատակով՝ ժամանակ առ ժամանակ տրամադրվող Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ,

(բ) պահում է իրացումից և/կամ ապահովագրությունից ստացված հասույթը և պահեստավորում է տվյալ Ապրանքները՝ Հաճախորդի ցանկացած այլ գույքից առանձին, ապահովելով դրանց նույնականացումը,

(գ) հաստատում է, որ նման Փաստաթղթերը և Ապրանքները կշարունակեն մնալ Կետ 11-ի (ԳԸԱՎ) համաձայն գրավադրված, որի ռիսկը, սակայն կրում է Հաճախորդը,

(դ) HSBC-ի պահանջով կազմում և HSBC-ին է ներկայացնում հավատարմագրային կառավարման անդորրագրեր HSBC-ի համար բավարար ձևով և բովանդակությամբ՝ ցանկացած այլ փաստաթղթերի հետ միասին, որը HSBC-ն կարող է պահանջել,

(ե) անհապաղ և ամբողջությամբ կատարում է HSBC-ի ցանկացած հրահանգ կամ պահանջ, որը HSBC-ն կարող է ներկայացնել Հաճախորդին նման Փաստաթղթերի և Ապրանքների կապակցությամբ,

(զ) ստացման դեպքում HSBC-իին անհապաղ վճարում է Ապրանքների իրացումից և/կամ ապահովագրությունից ստացված եկամուտները, և

(է) հավաստում է, որ HSBC-ն ցանկացած պահի կարող է տիրապետել և տնօրինել Ապրանքները, Փաստաթղթերը և/կամ Ապրանքների իրացումից և/կամ ապահովագրությունից ստացված եկամուտները:

13. ՀԱՇՎԱՆՑՈՒՄ

13.1. HSBC-ն ցանկացած պահի և առանց ծանուցման կարող է միավորել կամ համախմբել HSBC-ում Հաճախորդի ունեցած բոլոր բանկային հաշիվները և/կամ հաշվանցել Հաճախորդի ցանկացած պարտավորություն՝ HSBC-ի կողմից Հաճախորդի նկատմամբ ունեցած ցանկացած պարտավորության դիմաց (ներառյալ՝ ցանկացած Դրամական միջոցների գրավի կամ HSBC-ի կողմից ստացված կամ ունեցած հասույթի կապակցությամբ) անկախ վճարման վայրից, հաշվառում իրականացնող մասնաճյուղից կամ որևէ պարտավորության արժույթից:

13.2 HSBC-ն, որևէ հաշվանցում կատարելու համար, կարող է այլ արժույթով ցանկացած գումար փոխարկել մեկ այլ արժույթի՝ համապատասխան փոխարժեքով:

13.3 Եթե Հաճախորդի որևէ պարտավորության չափը ճշգրտված կամ հստակեցված չէ, HSBC-ն կարող է կիրառել կամ հաշվանցել իր կողմից բարեխղճորեն հաշվարկված գումար, որը կհանդիսանա այդ պարտավորության համարժեք գումար:

14. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

14.1. Սույն Պայմանների համաձայն HSBC-ի իրավունքները պետք է լինեն ի լրումն և որևէ կերպ չպետք է ստորադասվեն կամ այլ կերպ ազդեցության ենթարկվեն

որևէ կամ բազմաթիվ այլ վնասի հատուցման պարտավորությունների, երաշխիքների, ապահովությունների կամ այլ պարտավորությունների պատճառով, որոնք HSBC-ն տվյալ պահի դրությամբ կամ հետագայում կարող է ունենալ, Հաճախորդի կամ որևէ այլ անձի նկատմամբ:

14.2 HSBC-ն կարող է իր իրավունքներն իրականացնել սույն Պայմանների կամ ցանկացած այլ վնասի հատուցման պարտավորությունների, երաշխիքների, ապահովությունների կամ այլ պարտավորությունների կապակցությամբ, որոնք HSBC-ն տվյալ պահի դրությամբ կամ հետագայում կարող է ունենալ Հաճախորդի կամ որևէ այլ անձի նկատմամբ՝ այն հերթականությամբ, որը HSBC-ն նախընտրում է, և Հաճախորդը հրաժարվում է իր հնարավոր այն իրավունքներից, որոնք այլ բան են նախատեսում:

ԲԱԺԻՆ 3 – ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

15. ՎՃԱՐՆԵՐ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ

15.1 Եթե Հաճախորդի հետ գրավոր այլ համաձայնություն ձեռք չի բերվում.

(ա) Վճարներն ու այլ գանձումները (բացի տոկոսագումարներից և միջնորդավճարներից) յուրաքանչյուր Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ պետք է Հաճախորդի կողմից վճարվեն HSBC-ին՝ համապատասխան Դիմումում, Վարկային համաձայնագրում կամ Սակագներով համաձայնեցված գումարներով և ժամկետներում, կամ այլ կերպ՝ համաձայն HSBC-ի ստանդարտ ընթացակարգերի:

(բ) Հաճախորդի կողմից Առևտրի ֆինանսավորման վարկի կամ Ֆինանսավորման հետ կապված տոկոսագումարները HSBC-ին վճարվում են պահանջ ներկայացվելու դեպքում և հաշվարկվում են նման Առևտրի ֆինանսավորման վարկի կամ Ֆինանսավորման գումարի նկատմամբ՝ սկսած HSBC-ի կողմից նման Առևտրի ֆինանսավորման վարկ կամ Ֆինանսավորում տրամադրելու պահից մինչև այն օրը, երբ նման Առևտրի ֆինանսավորման վարկը կամ Ֆինանսավորումն ամբողջությամբ մարվում կամ հաշվանցվում է, և հաշվարկվում են համապատասխան Դիմումում, Վարկային համաձայնագրում կամ Սակագներով կամ HSBC-ի ստանդարտ ընթացակարգերով այլ կերպ համաձայնեցված դրույքաչափերի հիման վրա:

(գ) Հաճախորդի կողմից տոկոսագումարները պահանջ ներկայացվելու դեպքում ենթակա են վճարման HSBC-ին՝ HSBC-ի կողմից վճարված որևէ Պահանջի կապակցությամբ և հաշվարկվում են Պահանջի գումարի նկատմամբ՝ սկսած նման Պահանջը HSBC-ի կողմից վճարելու օրվանից մինչև այն օրը, երբ Հաճախորդի՝ նման Պահանջից բխող պարտավորությունները լիովին փոխհատուցվում են, և հաշվարկվում են համապատասխան Դիմումում, Վարկային համաձայնագրում կամ Սակագներով կամ HSBC-ի ստանդարտ ընթացակարգերով այլ կերպ համաձայնեցված դրույքաչափերի հիման վրա, և

(դ) պահանջ ներկայացվելու դեպքում միջնորդավճարը Հաճախորդի կողմից ենթակա է վճարման HSBC-ին՝ որևէ Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի կապակցությամբ և հաշվարկվում է նման Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի նոմինալ արժեքի նկատմամբ և Դիմումում, Վարկային համաձայնագրում կամ Սակագներով կամ HSBC-ի ստանդարտ ընթացակարգերով այլ կերպ համաձայնեցված դրույքաչափերի համաձայն:

15.2 Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ ցանկացած վճար, տոկոսագումար կամ միջնորդավճար հաշվեգրվում է օրական կտրածքով և հաշվարկվում է անցած օրերի փաստացի քանակի և 365 օր ունեցող տարվա հիման վրա կամ, ցանկացած դեպքում, երբ համապատասխան Կարգավորման օրենսդրական դաշտում գործող շուկայի պրակտիկան տարբերվում է համաձայն այդ շուկայի պրակտիկայի:

15.3 Հաճախորդի կողմից HSBC-ին վճարվող ցանկացած վճար, միջնորդավճար, տոկոսագումար կամ գանձում վերադարձման ենթակա չէ:

15.4 Եթե Հաճախորդը չի կարողանում վճարել սույն Պայմանների ներքո իր կողմից վճարվելիք ցանկացած գումար վճարման սահմանված օրը, ժամկետանց գումարի նկատմամբ հաշվարկվում է տուժանք՝ սկսած սահմանված օրվանից մինչև փաստացի վճարման օրը (ինչպես դատարանի կողմից կայացված վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո)՝ Դիմումում, Վարկային համաձայնագրում կամ Սակագներով կամ HSBC-ի ստանդարտ ընթացակարգերով այլ կերպ համաձայնեցված դրույքաչափերի համաձայն:

16. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

16.1 Հաճախորդի կողմից վճարումները HSBC-ին պետք է կատարվեն ուղղակիորեն հասանելի, փոխանցման համար ազատ, սահմանափակումներից զերծ միջոցներով և, ինչպես սահմանված է HSBC-ի կողմից, առանց որևէ հաշվանցման, հանդիպական պահանջի, պահումների կամ ցանկացած այլ տեսակի պայմանների՝ եթե պարտադրված չէ օրենքով:

16.2 Որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ HSBC-ին վճարված կամ վճարվող բոլոր գումարներն չեն ներառում Հարկերը: Հաճախորդը պարտավոր է վճարել ցանկացած համապատասխան Հարկ (անհրաժեշտության դեպքում)՝ հաշվարկված ցանկացած գումարի նկատմամբ, որը Հաճախորդը պարտավոր է վճարել HSBC-ին:

16.3 Եթե օրենքով պահանջվում է կատարել որևէ նվազեցում կամ պահում (այդ թվում՝ որևէ Հարկի հաշվին), Հաճախորդը պետք է.

(ա) վճարման ենթակա գումարն ավելացնի այնպես, որպեսզի անհրաժեշտ նվազագույն նվազեցումից կամ պահումից հետո HSBC-ն ստանա և իրավասու լինի տնօրինելու գուտ գումարը, որն առնվազն համարժեք լինի այն գումարին, որը HSBC-ն պետք է ստացած լիներ այդ նվազեցումը կամ պահումը չկատարելու դեպքում, և

(բ) այդպիսի վճարումից հետո 30 օրվա ընթացքում, HSBC-ին փոխանցի համապատասխան հարկային մարմնի գրավոր հաստատումը, որը փաստում

Է համապատասխան հարկային մարմնի կողմից այդ նվազեցման կամ պահման ստացումը:

16.4 Եթե HSBC-ն այլ կերպ չի համաձայնվել, Հաճախորդի կողմից յուրաքանչյուր վճարում HSBC-ին կատարվում է Հաճախորդի համապատասխան պարտավորության արժույթով, որի համար այդ վճարումը կատարվում է, և Հաճախորդը հրաժարվում է ցանկացած իրավունքից, որը նա կարող է ունենալ որևէ օրենսդրության շրջանակներում՝ նման վճարումն այլ արժույթով կատարելու համար: Եթե HSBC-ն Հաճախորդից կամ որևէ այլ անձից ստանում է որևէ վճարում, որը կատարված չէ այն արժույթով, որով պետք է կատարվեր այդ վճարումը, կամ եթե որևէ Դրամական միջոցների գրավը պետք է փոխարկվի մեկ այլ արժույթի այնպես, որպեսզի HSBC-ն հնարավորություն ունենա այն կիրառել Հաճախորդի որևէ չմարված այլ արժույթով արտահայտված պարտավորությունը մարելու համար, HSBC-ն պետք է նման փոխարկումը կատարի՝ կիրառելով համապատասխան Փոխարժեքը (կամ, կիրառելի լինելու դեպքում, ցանկացած հեջավորման համաձայնագրի պայմանների համաձայն, որը կարող է այդ նպատակով կնքված լինել Հաճախորդի և HSBC-ի միջև): Եթե HSBC-ն իրականացնում է սույն Պայմաններով թույլատրված ցանկացած արժույթի փոխարկում, Հաճախորդը HSBC-ին պետք է հատուցի այդ փոխարկման արդյունքում HSBC-ի կատարած ցանկացած ծախս, կրած վնաս կամ ստանձնած պարտավորություն:

16.5 Եթե Հաճախորդի կողմից կատարվելիք որևէ վճարում, կամ դրա կապակցությամբ արձակված կամ կայացված որևէ որոշմամբ, դատարանի որոշմամբ կամ վճռով սահմանված վճարում պետք է փոխարկվի մեկ այլ արժույթի՝ Հաճախորդի կամ որևէ այլ անձի նկատմամբ հայց հարուցելու կամ ապացույց ներկայացնելու, կամ որոշում, դատարանի որոշում կամ վճիռ ստանալու կամ կատարելու նպատակով, Հաճախորդը պարտավոր է HSBC-ին հատուցել այդ փոխարկումից ծագող կամ դրա արդյունքում առաջացած ցանկացած ծախս, վնաս կամ պարտավորություն:

16.6 Սույն Պայմանների, Առևտրի ֆինանսավորման ծառայության կամ սույն Պայմաններում հղում կատարված որևէ փաստաթղթի ներքո որևէ փոխարժեքի կամ գումարի վերաբերյալ HSBC-ի ցանկացած ծանուցում կամ որոշում (եթե ակնհայտ սխալ չի պարունակում) պետք է հանդիսանա այդ փոխարժեքի կամ գումարի վերաբերյալ սպառիչ ապացույց: Սույն Պայմանների և/կամ որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության հետ կապված որևէ իրավական վարույթում՝ HSBC-ի հաշվի մուտքերը/հաշվապահական գրանցումները հանդիսանում են դրանց առնչվող հարցերի վերաբերյալ առաջնային ապացույց:

16.7 Հաճախորդի պարտավորությունների կապակցությամբ HSBC-ին վճարված ցանկացած գումար կարող է կիրառվել այդ պարտավորությունները բավարարելու համար, կամ հաշվեգրվել առանձին միջանկյալ/տարանցիկ հաշվի վրա այնքան ժամանակ, քանի դեռ HSBC-ն չի որոշել Հաճախորդի պարտավորությունների ամբողջ ծավալի մարման նկատմամբ իր իրավունքները պահպանելու անհրաժեշտությունը:

16.8 HSBC-ի կողմից ստացված գումարները մարվում են հետևյալ հերթականությամբ վերջինիս կողմից (եթե այլ բան չի պահանջվում օրենսդրությամբ).

(ա) առաջինը՝ Հաճախորդի կողմից HSBC-ի նկատմամբ ունեցած բոլոր ծախսերը, վճարներն ու ծախքերը (ներառյալ իրավաբանական ծառայության վճարները) մարելու համար,

(բ) երկրորդ՝ HSBC-ի նկատմամբ ունեցած ցանկացած տոկոսագումար կամ այլ գումարները (ոչ մայր գումարը) մարելու համար, և

(գ) երրորդ՝ Հաճախորդի կողմից HSBC-ի նկատմամբ ունեցած որևէ հիմնական պարավորության մայր գումարի պարտքը մարելու համար:

16.9 Եթե Հաճախորդի պարտավորությունների կապակցությամբ HSBC-ին վճարված որևէ գումար պետք է վերադարձվի անվճարունակության, սնանկության կամ լուծարման վերաբերյալ որևէ օրենքի համաձայն կամ որևէ այլ պատճառով, HSBC-ն կարող է սույն Պայմանները և համապատասխան Առևտրի ֆինանսավորման ծառայությունը կիրառել և բռնագանձում կատարել՝ համարելով, որ նման գումարներ չեն վճարվել HSBC-ին:

16.10 Ցանկացած գումար, որի վճարումը համընկնում է ոչ Աշխատանքային օրվա հետ, ենթակա է վճարման հաջորդ Աշխատանքային օրը: Նման դեպքում տոկոսագումարների և միջնորդավճարների հաշվարկները ճշգրտվում են համապատասխանորեն ընդգրկելով հավելագրումները:

16.11 Եթե Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ Հաճախորդի կողմից HSBC-ին վճարման ենթակա որևէ գումար հաշվարկվում է հրապարակված ուղենիշային դրույքաչափի (օրինակ՝ Կենտրոնական բանկի բազային դրույքաչափի) հիման վրա, և այդ դրույքաչափը հաշվարկման պահին գրո տոկոսից ցածր է, ապա այդ դրույքաչափը դիտարկվում է որպես գրո տոկոս:

ԲԱԺԻՆ 4 – ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐ

17. ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

17.1 Ի լրումն Հաճախորդի կողմից HSBC-ին ներկայացված այլ հաստատումներ և երաշխիքների, Հաճախորդը հավաստում և երաշխավորում է HSBC-ին, որ.

(ա) պատշաճ կերպով հիմնադրված և/կամ գրանցված է այդ հիմնադրման և/կամ գրանցման երկրի օրենսդրության համաձայն, պատշաճ կերպով գործում է և ունի իր գործունեությունն իրականացնելու բոլոր անհրաժեշտ իրավասությունները այնպես, ինչպես այժմ իրականացնում է՝ սույն Պայմանների ներքո իր ակտիվներին տիրապետելու և իր պարտավորությունները ստանձնելու և կատարելու համար, և պարտավորվում է անհապաղ տեղեկացնել HSBC-ին իր կառուցվածքի կամ գործունեության առնչվող ցանկացած փոփոխության մասին,

(բ) իր կողմից սույն Պայմանների և յուրաքանչյուր Առևտրային գործարքի համաձայն ստանձնած պարտավորությունները, որոնք նա կարող է ժամանակ

առ ժամանակ կնքել, օրինական, վավեր, պարտադիր և կատարման ենթակա պարտավորություններ են,

(գ) բոլոր իրավասությունները, համաձայնությունները, թույլտվությունները, հաստատումները, որոշումները, լիցենզիաները, արտոնությունները, փաստաթղթերի հանձնումը, նտտարական վավերացումները կամ գրանցումները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի են սույն Պայմանների և յուրաքանչյուր Առևտրային գործարքի օրինական հիմքով ուժի մեջ մտնելու և դրանց համաձայն, իր իրավունքներն իրականացնելու և պարտավորությունները կատարելու համար, ձեռք են բերվել կամ իրականացվել են և ուժի մեջ են ամբողջ ծավալով,

(դ) սույն Պայմանները և յուրաքանչյուր Առևտրային գործարք, որը ժամանակ առ ժամանակ կարող է կնքվել, չեն հակասում կամ չեն հակասի իր հիմնադիր փաստաթղթերին կամ իր կամ իր ակտիվներից որևէ մեկի նկատմամբ պարտադիր որևէ համաձայնագրին կամ գործիքին կամ չի հանդիսանա պարտավորությունների խախտման կամ դադարեցման դեպք (այնպես, ինչպես սահմանված է) նման որևէ համաձայնագրի կամ գործիքի համաձայն,

(ե) Հաճախորդի կողմից կամ նրա համար պահանջված յուրաքանչյուր Առևտրի ֆինանսավորման ծառայություն վերաբերում է իրական Առևտրային գործարքին, այնպես, ինչպես սահմանված է նման Առևտրային գործարքին առնչվող փաստաթղթերում, և յուրաքանչյուր Առևտրի ֆինանսավորման ծառայության կամ այս Պայմանների կապակցությամբ Հաճախորդի կողմից HSBC-ին տրամադրված բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները (այդ թվում՝ ցանկացած Դիմումում) ամբողջական են, ճշգրիտ, իրական և վավեր,

(զ) Հաճախորդը չի ձեռնարկել որևէ կորպորատիվ գործողություն կամ որևէ այլ քայլ, և ոչ մի իրավական գործընթացներ չեն ձեռնարկվել իր լուծարման, դատական կառավարման, ակտիվների հավաքագրման կամ որևէ նմանօրինակ վարույթի համար, ինչպես նաև լուծարային կառավարչի և կառավարչի, դատական կառավարչի, լուծարողի կամ նման պաշտոնատար անձի նշանակման համար՝ իր ակտիվների կամ եկամուտների ամբողջ կամ որևէ էական մասի կապառությամբ,

(է) ցանկացած Փաստաթուղթ, Ապրանք կամ վաճառքից ստացված հասույթ, որոնց նկատմամբ HSBC-ն ունի կամ ենթադրաբար պետք է ունենա որևէ շահ, զերծ են ապահովված ցանկացած իրավունք(ներ)ից և ծանրաբեռնվածություն(ներ)ից (բացի հոգուտ HSBC-ի), և Հաճախորդը ցանկացած նման Փաստաթղթի, Ապրանքի կամ վաճառքից ստացված հասույթի միակ և իրական սեփականատերն է,

(ը) այն ամսաթվի դրությամբ, երբ HSBC-ն Հաճախորդին ֆինանսավորում է տրամադրում Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի հիման վրա, Հաճախորդը տեղյակ չէ այդ Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի կամ համապատասխան Առևտրային գործարքի կապակցությամբ որևէ վեճի (փաստացի, սկսվող կամ սպառնացող) մասին, և

(թ) այն ամսաթվի դրությամբ, երբ HSBC-ն Հաճախորդին ֆինանսավորում է տրամադրում Փաստաթղթի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի հիման վրա կամ Հաճախորդին տրամադրում է Առևտրի ֆինանսավորման վարկ, վերջինս այդ Փաստաթղթի, Փաստաթղթային ակրեդիտիվի կամ համապատասխան Առևտրային գործարքի կապակցությամբ որևէ ֆինանսավորում բացի HSBC-ից որևէ այլ անձից չի ստացել:

17.2 Սույն Պայմաններում պարունակվող բոլոր հաստատումներն ու երաշխիքները համարվում են տրամադրված յուրաքանչյուր անգամ, երբ (ա) Դիմում է ներկայացվում և ընդունվում, (բ) որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայություն ուժի մեջ է և (գ) Հաճախորդի որևէ Պարտավորություն դեռևս մարված չէ:

17.3 Հաճախորդն ընդունում է, որ HSBC-ն հիմնվելու է Հաճախորդի ներկայացրած ցանկացած հաստատման և երաշխիքի վրա, այդ թվում, երբ HSBC-ն գնահատում է Հաճախորդին Առևտրի ֆինանսավորման ծառայություն տրամադրելու կամ չտրամադրելու անհրաժեշտությունը:

17.4 Հաճախորդն անհապաղ տեղեկացնում է HSBC-ին իրեն հայտնի դարձած որևէ հաստատման կամ երաշխիքի ոչ հավաստի դառնալու մասին, կամ դրանք կրկին վերահստատելու դեպքում որևէ հաստատում կամ երաշխիքը այլևս չտարամադրելու մասին:

18. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր պարտավորություններ

18.1 HSBC-ի պահանջով Հաճախորդը.

(ա) HSBC-ին տրամադրում է Առևտրային գործարքի (ներառյալ առուվաճառքի պայմանագրի, գնման պատվերի և հաշիվ-ապրանքագրերի պատճենները), Փաստաթղթերի և Ապրանքների, Ապրանքների նախատեսվող ցանկացած վաճառքի վերաբերյալ տեղեկատվություն, որը կարող է պահանջվել HSBC-ի կողմից, և անհապաղ տեղեկացնում է HSBC-ին, եթե որևէ Առևտրային գործարք որևէ պատճառով չեղյալ է համարվում կամ դադարեցվում է, կամ եթե Առևտրային գործարքի հետ կապված որևէ էական վեճ է ծագում,

(բ) HSBC-ին տեղեկատվություն է տրամադրում Հաճախորդի և նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի, ակտիվների և գործառնությունների մասին, որոնք ողջամտորեն կարող են պահանջվել HSBC-ի կողմից,

(գ) HSBC-ին տրամադրում է վերջինիս կողմից պահանջվող ցանկացած տեղեկատվություն՝ «ճանաչի՛ր քո հաճախորդին» կամ նմանատիպ նույնականացման ընթացակարգերի պահանջներն ապահովելու համար,

(դ) HSBC-ին տեղյակ է պահում Ապրանքների գտնվելու վայրի և Ապրանքների վիճակի, որակի կամ քանակի փոփոխության մասին,

(ե) լիարժեք համագործակցում է HSBC-ի հետ և HSBC-ին տրամադրում է այն ամբողջ աջակցությունը, որը վերջինս պահանջում է Առևտրի

Ֆինանսավորման ծառայության շրջանակներում կամ դրա կապակցությամբ ցանկացած վճարումների հավաքագրումն ու բռնագանձումը դատական կարգով կամ այլ կերպ իրականացնելու համար, և

(գ) իր հաշվին, անհապաղ կատարում է այն բոլոր գործողությունները կամ ձևակերպում բոլոր այն փաստաթղթերը որոնք HSBC-ի կմատնանշի և որոնք՝

(i) նպատակառոտ դրամ են ցանկացած շահի ձևակերպման, գրանցման, պաշտպանության կամ սպասարկման համար, որոնք HSBC-ն ձեռք է բերում կամ նախատեսվում է, որ ձեռք է բերելու սույն Պայմանների համաձայն կամ դրանց կապակցությամբ (ներառյալ՝ ցանկացած Դրամական միջոցների գրավի, Փաստաթղթերի, Ապրանքների կամ վաճառքից ստացված հասույթի կապակցությամբ),

(ii) անհրաժեշտ են HSBC-ի ցանկացած իրավունքների, լիազորությունների և իրավական պաշտպանության միջոցների իրականացման համար՝ սույն Պայմանների և դրանց համաձայն կամ կապակցությամբ կամ համաձայն օրենքի, և

(iii) կպահանջվեն HSBC-ի կողմից ցանկացած Փաստաթղթի կամ Ապրանքների իրացմանն աջակցելուն, որտեղ HSBC-ն ունի կամ կարող է շահ ունենալ:

Առևտրի ֆինանսավորման ծառայության պարտավորություններ

18.2 Այնքանով, որքանով կիրառելի է Առևտրի ֆինանսավորման ծառայության նկատմամբ և/կամ որտեղ HSBC-ն ունի կամ կարող է շահ ունենալ համապատասխան Փաստաթղթային ակրեդիտիվից, Փաստաթղթերից, Ապրանքներից կամ վաճառքից ստացված հասույթից, Հաճախորդը.

(ա) ապահովում է, որպեսզի Փաստաթղթային ակրեդիտիվը, Փաստաթղթերը, Ապրանքները կամ վաճառքից ստացված հասույթը (ըստ կիրառելիության) ազատ լինեն ցանկացած հիփոթեքից, վճարից, գրավից, արգելանքից կամ ապահովման այլ եղանակից, ծանրաբեռնվածությունից կամ պահանջից՝ բացառությամբ այն հավատարմագրային կառավարման, գրավի կամ ապահովման այլ ձևի, որը կատարված է հօգուտ HSBC-ի, կամ որոնք ուղղակիորեն թույլատրված են HSBC-ի կողմից,

(բ) քանի դեռ Հաճախորդն ունի Ապրանքների նկատմամբ սեփականության իրավունք կամ, եթե որպես Առևտրի ֆինանսավորման ծառայության պայման Հաճախորդը պարտավոր է ձեռք բերել Ապրանքների ապահովագրություն.

(i) ապահովագրում է Ապրանքներն այնպիսի ապահովագրական ռիսկերից այն գումարով, ինչպես սահմանված է համապատասխան պայմանում կամ նման որևէ պայմանի բացակայության դեպքում՝ այնպես, ինչպես ընդունված է նման Ապրանքների պարագայում,

(ii) համապատասխան Առևտրի ֆինանսավորման ծառայության Դիմումի ներկայացման ամսաթվից անմիջապես հետո (և ցանկացած դեպքում՝ տասն օրվա ընթացքում) HSBC-ին տրամադրում է

համապատասխան ապահովագրական պոլիսների/վկայագրերի օրինակները, և

(iii) անհապաղ տեղեկացնում է HSBC-ին համապատասխան ապահովագրական պոլիսներով ցանկացած պահանջի մասին և ապահովագրողին ուղղորդում է HSBC-ին վճարել Ապրանքների հետ առնչվող բոլոր ապահովագրական հատուցումները,

(գ) HSBC-ի պահանջով.

(i) անհապաղ միջոցներ է ձեռնարկում, որպեսզի Ապրանքների նկատմամբ HSBC-ի շահառու հանդիսանալը հաստատվի ցանկացած համապատասխան ապահովագրական պոլիսում, և

(ii) Ապրանքների վերաբերյալ պահանջն անմիջապես ներկայացնում է համապատասխան ապահովագրողին,

(դ) անհապաղ HSBC-ին վճարում է Ապրանքների կապակցությամբ բոլոր այն ապահովագրական հատուցումները, որոնք նա ստացել է, ինչպես նաև չվճարված հատուցումների դեպքում պահում է այդպիսի հատուցումը HSBC-ի հավատարմագրային կառավարման ներքո հոգուտ HSBC-ի (կամ էթե հավատարմագրային կառավարումը չի ճանաչվում և ենթակա չէ հարկադիր կատարման, պահում է HSBC-ի անունից վերջինիս համար),

(ե) անհապաղ HSBC-ի օգտին հաստատում է տրված բոլոր Փաստաթղթերը, HSBC-ին ի պահ է տալիս կամ վերջինիս տրամադրության ներքո է հանձնում բոլոր Փաստաթղթերը և իր գրանցամատյաններում նշում է բոլոր Փաստաթղթերի և Ապրանքների նկատմամբ HSBC-ի շահառու հանդիսանալու մասին,

(զ) ժամանակին վճարում է բոլոր բեռնափոխադրումների, պահեստների, նավահանգիստների վճարները, տարանցիկ և այլ վճարները, վարձակալական վճարները և Փաստաթղթերի և/կամ Ապրանքների հետ կապված բոլոր այլ ծախսերը,

(է) թույլ չի տալիս Ապրանքի մշակում կամ փոփոխություն՝ առանց HSBC-ի նախնական գրավոր համաձայնության,

(ը) չի ձեռնարկում որևէ գործողություն, որը կարող է վնաս հասցնել Ապրանքների արժեքին կամ սույն Պայմաններով սահմանված որևէ գրավի կամ հավատարմագրային կառավարման արդյունավետությանը,

(թ) անհապաղ տեղեկացնում է HSBC-ին իրեն հայտնի ցանկացած իրադարձության մասին, որը կարող է բացասաբար ազդել Ապրանքների գնումն ավարտելու գնորդի պարտավորության վրա, կամ Ապրանքների վիճակի կամ որակի կամ այլ բնույթի փոփոխության կամ վատթարացման մասին,

(ժ) անհապաղ տեղեկացնում է HSBC-ին, էթե իրեն հայտնի է դառնում Ապրանքների կամ Փաստաթղթերի կամ դրանց հետ կապված որևէ գողության, խարդախության, անօրինական գործողության, կորստի, վնասի կամ որևէ այլ չարաշահումների մասին,

(ի) թույլատրում է HSBC-ին (կամ ցանկացած ներկայացուցչի) մուտք գործել ցանկացած տարածք, որտեղ պահվում կամ գտնվում են Ապրանքները դրանք ստուգելու, տիրապետելու կամ Ապրանքների նկատմամբ իր շահերը այլ կերպ պաշտպանելու համար,

(լ) չի փորձում զիջել, փոխանցել, վաճառել, օտարել կամ այլ կերպ վարվել Փաստաթղթերի, Ապրանքների կամ վաճառքից ստացված եկամուտների (ըստ կիրառելիության), Փաստաթղթային ակրեդիտիվի (կամ որևէ հաստատման (բացահայտվող կամ չբացահայտվող հիմքով տրամադրված)) հետ՝ բացառությամբ Առևտրի ֆինանսավորման ծառայության (ծառայությունների) հետ կապված՝ HSBC-ի և Հաճախորդի միջև ժամանակ առ ժամանակ համաձայնեցվող դեպքերի,

(խ) չի ներկայացնում Փաստաթղթեր որևէ այլ բանկի, ֆինանսական հաստատության կամ նմանատիպ ֆինանսական կազմակերպության կամ այլ կերպ չի ստանում ֆինանսավորում և/կամ փոխառություն նույն Առևտրային գործարքի կապակցությամբ,

(ծ) չի համաձայնում Փաստաթղթային ակրեդիտիվի, Պահուստային ակրեդիտիվի կամ Փաստաթղթի որևէ փոփոխության հետ՝ առանց HSBC-ի նախնական գրավոր համաձայնության, և

(կ) ապահովում է HSBC-ի պարտավորությունների անհապաղ ազատումը ցանկացած երաշխիքից, վնասի հատուցման պարտավորությունից կամ այլ պարտավորություններից, որոնք HSBC-ն կարող է տրամադրած լինել Փաստաթղթերի կամ Ապրանքների կապակցությամբ,

և HSBC-ն (կամ որևէ այլ ներկայացուցիչ) լիազորված է այնպիսի քայլեր ձեռնարկել և Հաճախորդի անունից և վերջինիս հաշվին կատարել ցանկացած վճարում՝ Ապրանքները բեռնառաքելու, հավաքագրելու, ցամաք տեղափոխելու, պահեստավորելու, ապահովագրելու կամ ստուգելու համար և/կամ պահանջել և գանձել վաճառքից ստացված ցանկացած հասույթ:

19. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՊՍԾԱՄԻՋՈՑՆԵՐ

19.1 Հաճախորդը հավաստիացնում և երաշխավորում է, որ.

(ա) ո՛չ Հաճախորդը, ո՛չ էլ նրա դուստր ընկերությունները, տնօրենները, պաշտոնյաները, աշխատակիցները, գործակալները կամ փոխկապակցված անձինք չեն հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ չեն վերահսկվում որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որը.

(i) ԱՄՆ ֆինանսների նախարարության Օտարերկրյա ակտիվների վերահսկողության վարչության, ԱՄՆ Պետդեպարտամենտի, Միավորված Ազգերի կազմակերպության Անվտանգության Խորհրդի, Եվրամիության, Նորին Մեծության գանձապետարանի, Հոնկոնգի Արտարժույթի վարչության կամ որևէ այլ պատժամիջոցներ սահմանող կամ կիրարկող մարմնի կողմից (որը կարող է կիրառվել HSBC-ի, Հաճախորդի, Առևտրի ֆինանսավորման ծառայության կամ Առևտրային

գործարքի նկատմամբ) (Պատժամիջոցներ) սահմանվող, կարգավորվող կամ իրականացվող պատժամիջոցների տակ է, կամ

(ii) տեղակայված է, կազմավորված է կամ հանդիսանում է որևէ երկրի կամ տարածքի ռեզիդենտ, որը կամ որի կառավարությունը գտնվում է Պատժամիջոցների ներքո,

(բ) ձեռք են բերվել յուրաքանչյուր Առևտրային գործարքի նկատմամբ կիրառվող ներմուծման կամ արտահանման համար անհրաժեշտ բոլոր լիցենզիաները, և եթե Հաճախորդը տեղյակ է, որ HSBC-ն կարող է պահանջել արտահանման լիցենզիա կամ Հաճախորդին համապատասխան Առևտրի ֆինանսավորման ծառայություն մատուցելու համար պահանջվող այլ թույլտվություն, Հաճախորդը տեղեկացնում է HSBC-ին այդ մասին մինչև HSBC-ի կողմից Առևտրի ֆինանսավորման ծառայության մատուցումը, և

(գ) Հաճախորդը պահպանում է օտարերկրյա և ներքին օրենքների ու կանոնակարգերի բոլոր էական դրույթները, որոնք վերաբերում են իր գործունեության երկրին, ինչպես նաև յուրաքանչյուր Առևտրային գործարքին և այդպիսի Առևտրային գործարքի առարկային, ներառյալ, եթե կիրառելի է, Առևտրային գործարքում կամ դրա հետ կապված փաստաթղթերում նկարագրված ապրանքների առաքումն ու ֆինանսավորումը:

19.2 Հաճախորդն ընդունում և համաձայնում է, որ.

(ա) Էյչ-Էս-Բի-Սի խումբը և նրան ծառայություններ մատուցող կազմակերպությունները պարտավոր են գործել համաձայն տարբեր երկրների օրենքների և կանոնակարգերի, այդ թվում այն օրենքների, որոնք վերաբերում են պատժամիջոցներին, արտահանման վերահսկողությանը և փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, կաշառքի, կոռուպցիայի և հարկերից խուսափելու կանխարգելմանը,

(բ) ցանկացած պահի HSBC-ն Հաճախորդից կարող է պահանջել անհապաղ HSBC-ին տրամադրել տեղեկատվություն ցանկացած Առևտրային գործարքի, ներառյալ՝ հիմքում ընկած պայմանագրի կամ այլ փաստաթղթերի մասին,

(գ) HSBC-ն կարող է ձեռնարկել և կարող է հանձնարարել Էյչ-Էս-Բի-Սի խմբի մյուս անդամներին ձեռնարկել, այնքանով, որքանով թույլատրվում է իր գործունեությունը կանոնակարգող օրենսդրությամբ, ցանկացած գործողություն (Համապատասխանության գործողություն), որը նա նպատակահարմար է համարում պատժամիջոցների կամ ներքին և օտարերկրյա օրենքների և նորմատիվ ակտերի համաձայն գործելու համար: Նման Համապատասխանության գործողությունը կարող է ներառել.

(i) ցանկացած վճարումների, հաղորդագրությունների կամ հրահանգների ուսումնասիրություն և հետաքննություն,

(ii) հետագա հարցումների իրականացում այն մասին, թե արդյոք այս կամ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը ենթակա է որևէ

Պատժամիջոցի կամ արտահանման վերահսկողության սահմանափակման, և/կամ

(iii) հետևյալ գործողությունների մերժումը.

(Ա) Առևտրի ֆինանսավորման ծառայության մատուցում, նորացում, երկարաձգում, փոխանցում կամ զիջում,

(Բ) ցանկացած Պահանջի վճարում, կամ

(Գ) Առևտրի ֆինանսավորման ծառայության կամ հրահանգի կատարում, որը չի համապատասխանում Պատժամիջոցներին, արտահանման վերահսկողությանը կամ ներքին և արտաքին օրենքներին կամ կանոնակարգերին, և

(դ) ո՛չ HSBC-ն, ո՛չ էլ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ անդամ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանների կամ Առևտրի ֆինանսավորման ծառայության ներքո որևէ կորստի, վնասի, ուշացման կամ պարտականությունների չկատարման համար, որոնք.

(i) բխում կամ առնչվում են HSBC-ի, նրան ծառայություններ մատուցողների կամ Խմբի ցանկացած անդամի կողմից ձեռնարկված Համապատասխանության գործողությունների հետ, և/կամ

(ii) զրկված են Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ ցանկացած Պահանջ վճարելու կամ ցանկացած հաղորդագրություն կամ տվյալներ ուղարկելու կամ ստանալու կամ որևէ այլ գործողություն կատարելու հնարավորությունից՝ կապված որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայության հետ՝ որևէ պետական մարմնի կողմից ընդունած օրենքի, որոշման կամ կանոնակարգի պատճառով:

ԲԱԺԻՆ 5 – ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ

20. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

20.1 HSBC-ն իրավասու է ընդունել, գործել և հիմնվել, ինչպես նաև դիտարկել հետևյալը որպես վավեր և ճշգրիտ.

(ա) ողջ հաղորդակցությունը, պահանջները և հրահանգները (ներառյալ ցանկացած Դիմում), որոնք տրվել են կամ ենթադրվում է, որ տրվել են HSBC-ին Հաճախորդի կողմից (Հրահանգ),

(բ) ցանկացած հաղորդակցություն և ցանկացած Պահանջ, որը ներկայացվել կամ ենթադրվում է, որ ներկայացվել է ցանկացած անձի կողմից, և

(գ) HSBC-ին տրամադրված ցանկացած փաստաթուղթ,

ներառյալ, յուրաքանչյուր դեպքում, ցանկացածը, որը ներկայացվել կամ փոխանցվել է Հարթակի, էլ. փոստի, ֆաքսիմիլի, հեռահաղորդակցիչի, տելեքսի, հեռագրի, հեռախոսի կամ նման այլ էլեկտրոնային եղանակով (յուրաքանչյուր դեպքում՝ էլեկտրոնային միջոց), և HSBC-ն պարտավոր չէ հարցում կատարել ցանկացած նման հրահանգի, հաղորդակցության, Պահանջի կամ փաստաթղթի թույլատրելիության կամ վավերության մասին:

20.2 Հաճախորդը հաստատում և ընդունում է այն ռիսկը, որ HSBC-ին կամ HSBC-ից էլեկտրոնային միջոցներով ուղարկված հաղորդագրությունները, Հրահանգները, Պահանջներն ու փաստաթղթերը կարող են ընդհատվել, դիտարկվել, փոփոխվել, վնասվել, վիրուսներ պարունակել կամ այլ կերպ միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից, ինչպես նաև ընդունում և համաձայնում է, որ HSBC-ն պատասխանատվություն չի կրում կամ պարտավորություններ չունի Հաճախորդի կամ որևէ այլ անձի առջև, և Հաճախորդը հրաժարվում է ցանկացած վնասի կապակցությամբ առաջացած յուրաքանչյուր և բոլոր պահանջներից՝ նման դեպքերի հետ կապված:

20.3 Եթե Հաճախորդը հաղորդում է, հրահանգ է տալիս, Պահանջ է ներկայացնում կամ փաստաթուղթ է ուղարկում էլեկտրոնային միջոցներով կամ հրահանգում է HSBC-ին թույլ տալ շահառուին կամ որևէ այլ անձի անել նույնը, Հաճախորդը պարտավոր է փոխհատուցել և զերծ պահել HSBC-ին ցանկացած և բոլոր Վնասներից, որոնք վերջինս կարող է կրել (այդ թվում՝ համապատասխան Հրահանգը կամ Պահանջն արտոնված չլինելու դեպքում ցանկացած կատարված վճարման կապակցությամբ):

20.4 Եթե Հաճախորդը Դիմում է ներկայացրել հոգուտ Հաճախորդի որևէ փոխկապված անձի որևէ Առևտրի ֆինասավորման ծառայություն ստանալու համար.

(ա) Հաճախորդը համաձայն է (և ձեռք է բերում զուգահեռ գրավոր համաձայնություն իր փոխկապակցված անձից), որ HSBC-ն պարտավոր չէ հրահանգներ ձեռք բերել փոխկապված անձից և HSBC-ն կարող է փոխկապակցված անձի անունից գործ ունենալ բացառապես Հաճախորդի հետ,

(բ) «Առևտրային գործարք» սահմանումը կվերաբերվի տվյալ փոխկապակցված անձին, այլ ոչ թե Հաճախորդին, իսկ «Փաստաթղթեր» և «Ապրանքներ» սահմանումները կմեկնաբանվեն համապատասխանաբար,

(գ) Սույն Պայմաններում Հաճախորդին կատարված հղումները, որը ներկայացնում, մշակում, օտարում, տնօրինում կամ օգտագործում է (ըստ նկարագրության) համապատասխան Փաստաթղթերը, Ապրանքները կամ վաճառքից ստացված հատույթը, ներառում են ցանկացած նման գործողություն իրականացնող փոխկապակցված անձին,

(դ) Հաճախորդն ապահովում է, որպեսզի փոխկապակցված անձը կատարի համապատասխան Առևտրային գործարքին, Փաստաթղթերին, Ապրանքներին և վաճառքից ստացված հատույթին վերաբերող սույն Պայմաններով նախատեսված բոլոր պարտավորությունները, և

(ե) Հաճախորդի կողմից սույն Պայմաններում կատարված յուրաքանչյուր հավաստիացում կատարվում է Հաճախորդի կողմից՝ իր համար և փոխկապակցված անձի անունից կամ, եթե դա կարող է արվել միայն փոխկապակցված անձի կապակցությամբ (փաստացի հանգամանքների

բերումով), ապա Հաճախորդի կողմից՝ փոխկապակցված անձի համար և անունից:

20.5 HSBC-ն պարտավոր չէ.

- (ա) ստուգել ցանկացած անձի ինքնությունը կամ իրավասությունը, որը հաղորդակցվում, հրահանգ է տալիս, Պահանջ է ներկայացնում կամ Փաստաթուղթ է տրամադրում էլեկտրոնային միջոցներով,
- (բ) ստուգել էլեկտրոնային միջոցներով կատարված ցանկացած հաղորդագրության, տրված հանձնարարականի, ներկայացված Պահանջի կամ տրամադրված փաստաթղթի վրա ցանկացած ստորագրության (էլեկտրոնային կամ այլ) իսկությունը, կամ
- (գ) պահանջել Հաճախորդի նախնական հաստատումը՝ նախքան էլեկտրոնային միջոցներով կատարված ցանկացած հաղորդագրության, տրված հրահանգի, ներկայացված Պահանջի կամ փաստաթղթի համաձայն գործելը,

այնուամենայնիվ, HSBC-ն կարող է իր բացարձակ հայեցողությամբ քայլեր ձեռնարկել ցանկացած հաղորդակցության, հրահանգի, պահանջի կամ փաստաթղթի վավերականությունը, իսկությունը և ծագումը հաստատելու համար (ներառյալ ցանկացած հրահանգի հեռախոսային ստուգման պահանջը) և ձեռնարկել ցանկացած քայլ, որը կարող է պահանջվել Արտաքին մատակարարի կողմից, և եթե վերջինս ի վիճակի չէ հաստատել որևէ հաղորդակցության, Հրահանգի, Պահանջի կամ փաստաթղթի վավերականությունը, լիազորությունները կամ ծագումը, կարող է հետաձգել կամ հրաժարվել գործել որևէ հաղորդակցության, Հրահանգի, Պահանջի կամ փաստաթղթի համաձայն կամ ցանկացած պահի կասեցնել կամ դադարեցնել ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայությունը:

21. ՀԱՐԹԱԿՆԵՐ

21.1 Հաճախորդն ընդունում և համաձայնվում է, որ.

- (ա) HSBC-ն կարող է օգտվել Հարթակներ տրամադրող Արտաքին մատակարարների կողմից մատուցվող ծառայություններից, որպեսզի HSBC-ն կարողանա կատարել սույն Պայմաններով (կամ ցանկացած այլ գործող պայմաններով) ստանձնած իր պարտավորությունները և տրամադրել Առևտրի ֆինանսավորման ծառայություններ,
- (բ) Արտաքին մատակարարներն անկախ են HSBC-ից և կարող են ինքնուրույն գանձել Հաճախորդից վճարներ՝ իրենց Հարթակի օգտագործման համար, և Հաճախորդը այդ վճարները կատարելու միակ պատասխանատուն է,
- (գ) HSBC-ի սույն Պայմաններով և ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայությամբ սահմանված պարտավորությունները ենթակա են Արտաքին պայմանների ներքո HSBC-ի իրավունքների կարգավորման, և եթե այդ Արտաքին մատակարարների կողմից տրամադրված Հարթակները հասանելի են HSBC-ի և,

(դ) HSBC-ն որևէ պարտավորություն չի կրում Հաճախորդին Արտաքին պայմանների մասին տեղեկացնելու կամ որևէ Արտաքին պայման տրամադրելու համար,

(ե) HSBC-ն չի վերահսկում Արտաքին մատակարարի կողմից տրամադրած Հարթակի էլեկտրոնային գործընթացները՝ տվյալներ կամ հաղորդագրություններ մշակելու, կարգավորելու և/կամ ուղարկելու համար,

(զ) վերջինս HSBC-ին տեղեկացնում է Հարթակի նկատմամբ կիրառվող բոլոր Արտաքին պայմանների կամ իր կողմից օգտագործվող (կամ օգտագործելու մտադրությամբ) որևէ Հարթակի կողմից գանձվող վճարների մասին՝ կապված ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայության հետ, ինչպես նաև HSBC-ին անհապաղ տեղեկացնում է ցանկացած փոփոխության մասին, և

(է) անհապաղ տրամադրում է Հաճախորդի կողմից օգտագործվող ցանկացած Հարթակի վերաբերյալ բոլոր տեղեկությունները, որոնք HSBC-ն կարող է ողջամտորեն պահանջել:

21.2 HSBC-ն ոչ մի պարտավորություն կամ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կամ որևէ այլ անձի՝ հետևյալի արդյունքում կրած որևէ կորստի կամ վնասի համար.

(ա) Հաճախորդի, HSBC-ի կամ որևէ այլ անձի համար ցանկացած պատճառով որևէ Հարթակի անհասանելիության կապակցությամբ, կամ

(բ) Հաճախորդի կողմից Հարթակի օգտագործման կամ դրանց հետ կապված, կամ HSBC-ի կամ որևէ Արտաքին մատակարարի կողմից՝ Հարթակն օգտագործող Հաճախորդին մատուցված ծառայությունների կապակցությամբ:

21.3 Հաճախորդը.

(ա) պետք է պահպանի HSBC-ի և յուրաքանչյուր Արտաքին մատակարարի անվտանգության բոլոր ընթացակարգերի պահանջները, ինչպես նաև պետք է կատարի ցանկացած այլ ողջամիտ պահանջներ, որոնք HSBC-ն կամ ցանկացած Արտաքին մատակարար կարող է ներկայացնել Հաճախորդին ցանկացած Հարթակի անվտանգության վերաբերյալ, ներառյալ անվտանգության ցանկացած խախտման վերացման միջոցառումների մասին հրահանգները, և

(բ) ընդունում և համաձայն է, որ Հաճախորդը պատասխանատու է յուրաքանչյուր Հարթակի մուտքի և Հաճախորդի հաշվարկային և հաղորդակցության համակարգերում պահվող տեղեկատվության օգտագործման վերաբերյալ անվտանգության բոլոր միջոցների ստեղծման, պահպանման և կանոնավոր վերանայման համար, ինչպես նաև հաստատում է, որ գնահատել է յուրաքանչյուր Հարթակի անվտանգության միջոցները և գտել է, որ դրանք համարժեք են Հաճախորդի շահերը պաշտպանելու համար,

(գ) ձեռնարկում է բոլոր ողջամիտ կանխարգելիչ միջոցները յուրաքանչյուր Հարթակի խարդախ կամ չարտոնված օգտագործումը կամ մուտքը կանխելու համար,

(դ) երաշխավորում է, որ ո՛չ Հաճախորդը, ո՛չ էլ նրա աշխատակիցները ոչինչ չեն ձեռնարկի, ինչը կարող է հանգեցնել որևէ Հարթակի կամ համակարգերի անվտանգության կամ HSBC-ի անվտանգության խաթարմանը,

(ե) տեղեկացնում է HSBC-ին ցանկացած Հարթակի փաստացի չարտոնված մուտք գործելու կամ մուտքի փորձի կամ որևէ չարտոնված գործարքի կամ չարտոնված հրահանգ կատարելու փորձի մասին՝ իրեն հայտնի դառնալուց հետո ողջամտության սահմաններում հնարավորինս շուտ: Այս ծանուցումը պետք է կատարվի հեռախոսով, սակայն պետք է ուղեկցվի գրավոր ծանուցմամբ՝ հեռախոսագանգը կատարելուց հետո քառասունութ ժամվա ընթացքում:

ԲԱԺԻՆ 6 – ԱՅԼ

22. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱՎՈՒՄ

22.1 Ո՛չ HSBC-ն, ո՛չ էլ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի որևէ անդամ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի (կամ նրա որևէ փոխկապակցված անձի) կողմից կրած ցանկացած կորստի, վնասների, վճարումների, պահանջների, հայցերի, ծախսերի կամ ծախքերի համար, որոնք ծագում են կամ կապված են սույն Պայմանների կամ Առևտրի ֆինանսավորման որևէ ծառայության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ կորուստը, վնասը, վճարումը, պահանջը, հայցը, ծախսը կամ ծախքն առաջանում է HSBC-ի կամ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի այլ անդամի կողմից կոպիտ անփութությամբ կամ դիտավորությամբ կատարված անօրինական վարքագծի արդյունքում:

22.2 Չնայած Կետ 22.1-ին, HSBC-ն կամ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի որևէ անդամ ոչ մի պարագայում որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի (կամ նրա հետ փոխկապակցված որևէ անձի) առջև.

(ա) բիզնեսի, շահույթի կամ տվյալների ցանկացած կորստի համար,

(բ) անուղղակի, հետևանքային կամ հատուկ կորստի կամ վնասի համար,

անկախ այն հանգամանքից , թե HSBC-ն կամ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ցանկացած անդամ տեղեկացված են եղել, թե ոչ նման կորստի կամ վնասի հնարավորության մասին:

22.3 Չսահմանափակվելով Կետ 22.1-ի և Կետ 22.2-ի դրույթներով՝ HSBC-ն պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում, և Հաճախորդը հրաժարվում է HSBC-ի նկատմամբ ներքոնշյալի կապակցությամբ ցանկացած պահանջների ներկայացումից.

(ա) ցանկացած անձի կամ թղթակից բանկի փաստաթղթերի կամ վճարների առաքման հետ կապված որևէ գործողության, թերացման, կորստի

կամ ուշացման կամ ցանկացած թղթակից բանկի որևէ կասեցման, գործողության, թերացման, անվճարունակության կամ սնանկության պատճառով,

(բ) Հարթակի կամ հեռահաղորդակցության կապուղու միջոցով որպես էլեկտրոնային հաղորդակցություն փոստով ուղարկված նամակների կամ փաստաթղթերի ցանկացած ուշացման և/կամ կորստի համար, կամ երրորդ անձի կողմից փոխանցման կամ առաքման ժամանակ առաջացող որևէ ուշացման, խեղաթյուրման կամ այլ սխալների համար, և Հաճախորդն ընդունում է, որ չնայած որևէ հակառակ հրահանգի, HSBC-ն կարող է փաստաթուղթ ուղարկել իր համար նպատակահարմար ցանկացած ձևով,

(գ) սույն Պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկի՝ իր ողջամիտ վերահսկողությունից դուրս լինելու ցանկացած պատճառով, կատարման ուշացման կամ չկատարման համար, ներառյալ, բայց չսահմանափակելով, հեռահաղորդակցության, տվյալների փոխանցման և համակարգչային համակարգերի և ծառայությունների խափանման, անսարքության կամ անհասանելիության պատճառով, որոնց նկատմամբ HSBC-ն չունի վերահսկողություն, պատերազմը, ռազմական գործողությունները, ներխուժումը, քաղաքացիական անկարգությունները, գործադուլները, lockouts /աշխատանքի դադարեցումներ/ կամ այլ արդյունաբերական գործողությունները կամ առևտրային վեճերը (HSBC-ի աշխատակիցների կամ որևէ այլ անձի ներգրավմամբ) կամ որևէ օրենք կամ կառավարության հրաման (անկախ իրավաբանական ուժ ունենալու փաստից),

(դ) HSBC-ի կողմից Պահանջի վճարման ցանկացած չկատարում, կամ HSBC-ի այլ գործողություն կամ անգործություն՝ պայմանավորված որևէ ներքին կամ օտարերկրյա օրենքով, կանոնակարգով, որոշմամբ կամ ներպետական կամ օտարերկրյա դատարանի կամ որևէ պետական հաստատության որոշմամբ կամ մեկնաբանությամբ,

(ե) ցանկացած անձի ստորագրության կամ հաստատման ձևը, բավարար հանդիսանալը, ճշտությունը, իսկությունը, այդ անձի իրավասու հանդիսանալը (այդ թվում HSBCին փաստաթղթեր, պահանջներ ներկայացնող, հրահանգներ տվող (ներառյալ էլեկտրոնային միջոցներով) անձին, որը ենթադրաբար գործում է Հաճախորդի կամ շահառուի անունից), կամ ցանկացած փաստաթղթի կեղծ հանդիսանալը կամ իրավաբանական ուժ ունենալը, էթե նման փաստաթղթերն արտաքին տեսքից ողջամտորեն պատշաճ վիճակում են,

(զ) որևէ Հարթակից կամ Առևտրային գործարքի ցանկացած կողմից պատրաստված, ներկայացված կամ ստացված ցանկացած տվյալների, փաստաթղթերի կամ հաշվետվությունների աղբյուրը, ճշգրտությունը, վավերականությունը, իսկությունը, կեղծումը կամ իրավաբանական ուժ ունենալը, դրանց հետ կապված ցանկացած փաստաթղթերի, կամ ապրանքների, ծառայությունների կամ այլ գործունեության

նկարագրությունը, քանակը, կշիռը, որակը, վիճակը, փաթեթավորումը, առաքումը, արժեքը կամ առկայությունը, որոնց վերաբերում են այդ տվյալները, փաստաթղթերը կամ հաշվետվությունները, կամ Առևտրային գործարքի որևէ կողմի, բեռնաառաքողի, փոխադրողի, առաքիչի, բեռներ ստացողի, ապրանքներն ապահովագրողի կամ որևէ այլ անձի բարեխղճությունը կամ գործողությունը կամ անգործությունը, վճարունակությունը, կատարողականությունը կամ դիրքը,

(ե) շահառուի ցանկացած ոչ պատշաճ գործողություն, ներառյալ Առևտրային գործարքի պայմանների խախտումը, որի դեպքում Հաճախորդը կրում և ստանձնում է դրանց հետ կապված բոլոր ռիսկերը, և

(ը) Հաճախորդի գործունեությունը, որը գործում կամ հիմնվում է HSBC-ից ստացված ցանկացած խորհրդատվության վրա՝ անկախ Հաճախորդի կողմից նման խորհրդատվության համար դիմելու փաստից:

22.4 Եթե HSBC-ն օգտագործում է այլ կողմի, թղթակից բանկի, գործակալի կամ Հարթակի ծառայությունները՝ Գործիքի կամ Փաստաթղթային ակրեդիտիվի թողարկման, վճարումների իրականացման, Ապրանքների կամ Փաստաթղթերի մշակման կամ սույն Պայմաններով նախատեսված ծառայությունների մատուցմանը ցանկացած այլ նպատակով օժանդակելու համար, HSBC-ն դա կատարում է Հաճախորդի հաշվին և ռիսկով, և այդ կապակցությամբ HSBC-ն որևէ պարտավորություն և պատասխանատվություն չի կրում՝ HSBC-ի կողմից նման որևէ կողմին տրված ցանկացած հրահանգի չկատարման համար, եթե նույնիսկ այդ կողմի ընտրությունը կատարել է HSBC-ն: Բացի այդ, HSBC-ն պատասխանատվություն չի կրում որևէ նման այլ կողմի գործողության, անգործության, պարտավորությունների չկատարման, գործունեության կասեցման, սնանկացման կամ անվճարունակության համար:

22.5 Եթե HSBC-ն Հաճախորդի խնդրանքով ստուգում է որևէ փաստաթուղթ, նման ստուգումը միայն կողմնորոշիչ /ինդիկատիվ/ է, այլ ոչ վերջնական կամ անառարկելի, և HSBC-ն պարտավորություն և պատասխանատվություն չի կրում, իսկ Հաճախորդը հրաժարվում է HSBC-ի նկատմամբ ցանկացած նման ստուգման արդյունքում HSBC-ի կողմից որևէ անհամապատասխանության չհայտնաբերման կամ թերացման կապակցությամբ ներկայացված բոլոր պահանջներից:

22.6 Եթե HSBC-ն համաձայնում է խորհրդատվություն տրամադրել Փաստաթղթային ակրեդիտիվի կամ ցանկացած Գործիքի վերաբերյալ, որը չի թողարկվել որևէ բանկի կողմից, կամ ներկայացնել նման Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի վերաբերյալ որևէ Փաստաթուղթ կամ այլ կերպ մշակել այն, Հաճախորդն ընդունում և համաձայնում է, որ.

(ա) նման Փաստաթղթային ակրեդիտիվը կամ Գործիքը չի կարող հանդիսանալ անկախ երրորդ կողմի պարտավորություն և չի կարող երաշխավորել թողարկողի կամ դիմողի կողմից վճարումը,

(բ) ԱՄՊ գործող կանոնները չեն կարող վերաբերել, կիրառվել կամ տարածվել Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի նման տեսակի վրա,

(գ) HSBC-ն կարող է ի վիճակի չլինել պահանջելու թողարկողից, որպեսզի վերջինս նույն կերպ վճարում կատարի, ինչպես դա հնարավոր է որևէ բանկի կողմից թողարկված Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի կապակցությամբ, և

(դ) Հաճախորդը պետք է դիմի անկախ իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար,

և Հաճախորդը կրում է բոլոր նման ռիսկերը և հրաժարվում է HSBC-ի նկատմամբ բոլոր պահանջներից՝ նման Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի հետ կապված կորուստների, վնասների, ծախսերի, վարձավճարների, հայցերի, գործողությունների կամ պահանջների համար, ներառյալ ցանկացած պահանջ, որ HSBC-ն չի զգուշացրել Հաճախորդին նման տեսակի Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի կապակցությամբ խորհրդատվություն տրամադրելու մասին, չի վճարել նման Փաստաթղթային ակրեդիտիվը կամ Գործիքը որևէ բանկի կողմից թողարկված Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Գործիքի վճարման համար սահմանված կարգով կամ չի գանձել վճարումը նման Փաստաթղթային ակրեդիտիվ կամ Գործիք թողարկողից:

22.7 Ելնելով վերոնշյալ դրույթներից, եթե սույն Պայմանների ներքո կամ որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայություն կապակցությամբ HSBC-ի կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած անդամի որևէ Հաճախորդի (կամ նրա փոխկապակցված անձի) նկատմամբ առաջանում է պատասխանատվություն, այդպիսի պատասխանատվության հանրագումարը, յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի 1 000 000 ԱՄՆ դոլարը:

23. ԲԱՅԱՀԱՅՑՈՒՄ, ԳԱՂՏՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

23.1 Առանց Հաճախորդի և HSBC-ի կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած անդամի միջև որևէ այլ պայման սահմանափակելու, HSBC-ն իրավասու է.

(ա) նշանակել ցանկացած այլ անձ որպես՝ սույն Պայմանների և ցանկացած Առևտրային ծառայությունների կապակցությամբ իր միջնորդ, հասցեատեր/անվանատեր կամ գործակալ և HSBC-ը կարող է, սույն Պայմանների և Առևտրային ծառայությունների ներքո իր ցանկացած լիազորություն, պատվիրակել այդպիսի անձին,

(բ) տեղեկացնել ցանկացած այլ անձի որևէ Փաստաթղթերի, Ապրանքների կամ վաճառքից ստացված հասույթի նկատմամբ իր շահագրգռվածության մասին,

(գ) Հաճախորդի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն փոխանցել և բացահայտել հետևյալ հասցեատերերին (որոնք նույնպես կարող են մշակել, փոխանցել և բացահայտել տվյալ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը).

(i) Էյչ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած անդամ և նրա կամ նրանց պաշտոնատար անձիք, տնօրեններ, աշխատակիցներ, մասնագիտացված խորհրդատուներ, ապահովագրողներ, բրոքերներ, աուդիտորներ, գործընկերներ, ենթակապալառուներ, ներկայացուցիչներ,

հասցեատեր/անվանատեր, գործակալներ, պատվիրակներ, ծառայություն մատուցողներ (այդ թվում Արտաքին մատակարարներ և Հարթակներ) և համագործակցողներ,

(ii) իշխանության ցանկացած մարմին,

(iii) Հաճախորդի անունից գործող ցանկացած անձ, վճարում ստացողներ, շահառուներ, հաշվի անվանատերեր, միջնորդ, թղթակից և գործակալ բանկեր, քլիրինգային պալատներ, քլիրինգային կամ հաշվանցող/հաշվարկային համակարգեր, շուկայի կոնտրագենտներ, վերադաս պահում իրականացնող գործակալներ, սվոփ կամ առևտրի ռեպոզիտարիաներ, ֆոնդային բորսաներ և ընկերություններ, որտեղ Հաճախորդն ունի արժեթղթեր կամ մասնակցություն (եթե այդ արժեթղթերը կամ փայաբաժինները պահվում են HSBC-ի կողմից Հաճախորդի համար),

(iv) ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ձեռք է բերում (կամ կարող է ձեռք բերել) շահագրգռվածություն/մասնակցություն կամ կրում է (կամ կարող է կրել) որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայություն հետ կապված ռիսկ,

(v) ցանկացած այլ ֆինանսական հաստատություն, վարկային ռիսկի գնահատման գործակալություն կամ վարկային բյուրո՝ վարկային տեղեկանքների ստացման կամ տրամադրման համար, և/կամ

(vi) ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կապված է Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ բիզնեսի փոխանցման, օտարման, միաձուլման կամ ձեռքբերման հետ, որտեղ որ այն գտնվի, ներառյալ այն երկրները, որոնք չունեն տվյալների պաշտպանության այնպիսի մակարդակ պահովող օրենքներ, ինչպես այն երկիրը, որի շրջանակներում տրամադրվում է Առևտրային ծառայությունը,

ներառյալ, երբ նման ծանուցման, փոխանցման կամ բացահայտման ստացողը գտնվում է համապատասխան Կարգավորող օրենսդրական դաշտից դուրս:

23.2 HSBC-ն պատասխանատվություն չի կրում ցանկացած Արտաքին մատակարարի գործողությունների կամ անգործության համար՝ կապված այդ Արտաքին մատակարարի կողմից Հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, օգտագործման կամ բացահայտման հետ:

23.3 Եթե Հաճախորդը HSBC-ին է տրամադրել ֆիզիկական անձանց մասին տեղեկատվություն (ինչպես, օրինակ, լիազորված ստորագրողների մասին), Հաճախորդը հաստատում է, որ այդ ֆիզիկական անձինք այդ կապակցությամբ Հաճախորդին տրամադրել են պատշաճ լիազորություններ (ներառյալ՝ նրանց անունից տվյալների պաշտպանության մասին ցանկացած ծանուցումների ստացումը) և համաձայնություն են տվել HSBC-ին իրենց Անձնական տվյալների և HSBC-ի կողմից սույն Պայմաններով նախատեսված ցանկացած գործողություն իրականացնելու կամ Հաճախորդին կամ նրա օգտին Առևտրային ծառայություն մատուցելու նպատակով պահանջվող տվյալների հավաքագրման,

օգտագործման, պահպանման, մշակման, փոխանցման և բացահայտման կապակցությամբ:

23.4 Հաճախորդն ապահովում է, որ ցանկացած տեղեկատվություն, որը Հաճախորդը խնդրում է HSBC-ին փոխանցել երրորդ անձանց, լինի ամբողջական, ճշգրիտ և չառաջացնի որևէ պահանջ HSBC-ի նկատմամբ (ներառյալ զրպարտության, մասնավոր կյանքի, բանկային գաղտնիքի կամ տվյալների պաշտպանության կամ երրորդ անձանց ցանկացած այլ իրավունքների խախտման համար), իսկ Հաճախորդը հաստատում և հայտարարում է, որ ստացել է անհրաժեշտ համաձայնությունը և/կամ հրաժարումը (անհրաժեշտության դեպքում) HSBC-ի կողմից այդ տեղեկատվությունը փոխանցելու համար:

24. ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

24.1 Բացառությամբ Առևտրի ֆինանսավորման այն ծառայության, որը տրամադրվել է անհետևանջելիության կամ պարտավորվածության հիմքով, HSBC-ը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել Առևտրի ֆինանսավորման ծառայության մատուցումը կամ մերժել դրա մատուցումն իր բացարձակ հայեցողությամբ:

24.2 HSBC-ի ցանկացած հրաժարում, պարտավորության կատարումից ազատըն կամ համաձայնություն՝ իրականացված սույն Պայմանների կամ Առևտրի ֆինանսավորման ծառայությունների կապակցությամբ ուժի մեջ են միայն այն դեպքում, եթե կատարվում են գրավոր (որը կարող է կատարվել Հարթակի միջոցով):

24.3 HSBC-ն կարող է ցանկացած ժամանակ փոփոխել սույն Պայմանները՝ Հաճախորդին նախապես՝ առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին և Առևտրի ֆինանսավորման ցանկացած ծառայություն, , որը պահանջվել է նման ծանուցումն ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո, ենթակա է փոփոխված պայմաններին:

24.4 HSBC-ն լիազորված է Հաճախորդի հաշվին ձեռնարկել այնպիսի միջոցներ և կատարել այնպիսի վճարումներ, որոնք նա անհրաժեշտ է համարում՝ Հաճախորդի կողմից սույն Պայմաններով կամ ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայություն մատուցվող իր պարտավորությունների խախտման հետևանքները վերականգնելու համար:

24.5 Ո՛չ HSBC-ի կողմից իր իրավունքներից որևէ մեկի կամ իրավական պաշտպանության միջոցների չկատարումը, ո՛չ էլ ուշացումը սույն Պայմանների համաձայն կամ որևէ Առևտրի ֆինանսավորման ծառայություն կապակցությամբ չպետք է դիտվեն որպես ցանկացած նման իրավունքից կամ իրավական պաշտպանության միջոցներից հրաժարում, ինչպես նաև որևէ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցի կամ դրա մասնակի իրականացումը չպետք է խոչընդոտի այլ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցի հետագա կամ այլ կերպ իրականացմանը:

24.6 Հաճախորդը չի կարող զիջել կամ փոխանցել սույն Պայմանների կամ Առևտրի ֆինանսավորման ծառայության ներքո իր իրավունքները կամ

պարտականությունները: HSBC-ն կարող է զիջել, փոխանցել կամ որպես ապահովում տրամադրել սույն Պայմանների կամ Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ իր ցանկացած իրավունք՝ առանց սահմանափակման կամ ծանուցման:

24.7 Առանց սահմանափակելու Կետ 20-ը (*ՀՐԱՄԱՅՆՆԵՐ*), Հաճախորդի կողմից սույն Պայմանների կամ Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ ցանկացած ծանուցում, պետք է տրվի HSBC-ին գրավոր՝ HSBC-ի կողմից Հաճախորդին տրամադրված վերջին հասցեով: HSBC-ն կարող է ծանուցումներ տրամադրել Հաճախորդին անձամբ, հեռախոսով կամ ֆաքսիմիլային կապի միջոցով, փոստով, Հարթակի միջոցով կամ Հաճախորդի համաձայնությամբ էլեկտրոնային այլ կապուղով՝ Հաճախորդի կողմից HSBC-ին ծանուցված վերջին հասցեով կամ համարով: Փոստով ուղարկված ծանուցումը կհամարվի ստացված՝ ուղարկելուց 7 օրացուցային օր հետո, եթե առաքվում է նույն երկրի սահմաններում, կամ ուղարկելուց 15 օրացուցային օր հետո, եթե առաքվում է այլ երկիր:

24.8 Սույն Պայմանների յուրաքանչյուր դրույթ առանձին և ինքնուրույն դրույթ է, և նման դրույթներից մեկի կամ մի քանիսի անօրինական, անվավեր կամ կատարման ոչ ենթակա դառնալը/ճանաչումն որևէ կերպ ազդեցություն չունի մնացած դրույթների վրա:

24.9 Եթե Հաճախորդի կազմը ներառում է երկու կամ ավելի անձ, ապա այդ անձանց պարտավորություններն ու պատասխանատվությունն Առևտրի ֆինանսավորման ծառայության և այս Պայմանների շրջանակներում և կապակցությամբ հանդիսանում են համապարտ պարտավորություններ:

24.10 Սույն Պայմաններում որևէ դրույթ չպետք է դիտարկվի որպես HSBC-ի և Հաճախորդի միջև որևէ գործընկերության, համատեղ գործունեության կամ պրինցիպալի և գործակալի հարաբերությունների ստեղծում կամ ցանկացած բնույթի ֆիդուցիար հարաբերությունների ստեղծում կամ առաջացում:

24.11 Այնքանով, որքանով թույլատրվում է Կարգավորող օրենսդրությամբ, Հաճախորդն անհետկանչելիորեն հրաժարվում է դատական հետապնդման, ընդդատության կամ դատական որոշման սուվերեն անձեռնմխելիության որևէ իրավունքից (այդ թվում՝ մինչև դատավճիռը տրամադրվող ապահովման միջոցների և ցանկացած դատական որոշման կատարման կապակցությամբ), որը նա կարող է ունենալ Կարգավորող օրենսդրության շրջանակներում կամ այլ կերպ անկախ նրանից, թե այդ անձեռնմխելիությունը վերաբերում է իրեն, թե որևէ առևտրային կամ ոչ առևտրային ակտիվներին (ներառյալ դիվանագիտական առաքելության անունով կամ այլ կերպ պահվող հողը, բանկային հաշիվները կամ այլ ակտիվները, կամ Հաճախորդի կենտրոնական բանկին կամ այլ դրամավարկային մարմնին պատկանող ակտիվները):

24.12 Սույն Պայմանները գործում են հօգուտ Հաճախորդի, HSBC-ի և Էյչ-Էս-Բի-Սի իմրի յուրաքանչյուր անդամի և նախատեսված չեն հօգուտ որևէ այլ երրորդ անձի կամ չեն կարող նման երրորդ անձանց կողմի կատարման պարտադրվել:

HSBC-ի կողմից սույն Պայմանները կամ որևէ պայմանագիրը, որի մաս են կազմում սույն Պայմանները, դադարեցնելու կամ փոփոխելու ցանկացած իրավունք ենթակա չէ որևէ այլ երրորդ անձի համաձայնության:

25. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴՈՒՍՏՈՒԹՅՈՒՆ

25.1 Առևտրի ֆինանսավորման ծառայության իմաստով.

(ա) Առևտրային ծառայությունը և սույն Պայմանները կարգավորվում են Կարգավորող օրենսդրությամբ, և

(բ) Կարգավորող օրենսդրության երկրում գործող դատարաններն ունեն ցանկացած վեճ լուծելու ոչ բացառիկ իրավասություն, որը կարող է ծագել կամ կապված լինել այդ Առևտրի ֆինանսավորման ծառայության և սույն Պայմանների, դրանց մեկնաբանության կամ դրանցից բխող կամ դրանց հետ կապված որևէ այլ ոչ պայմանագրային պարտավորության հետ:

25.2 Եթե Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ Դիմումում կամ Վարկային համաձայնագրում նշված է վարույթի գործակալ/process agent, ապա ցանկացած իրավաբանական գործընթացի վերաբերյալ ծանուցումը այն անձին, որի անունը և հասցեն նշված են նման Դիմումում կամ Վարկային համաձայնագրում, նշանակում է Հաճախորդի պատշաճ ծանուցում:

25.3 Եթե Հաճախորդի կողմից ոչ մի վարույթի գործակալ/process agent չի նշանակվել, Հաճախորդը, HSBC-ի պահանջի դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում նշանակում է վարույթի գործակալ (Կարգավորող օրենսդրության երկրիտարածքում գրասենյակով)՝ սույն Պայմանների և համապատասխան Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ Հաճախորդի անունից բոլոր իրավական գործընթացների վերաբերյալ ծանուցումները ստանալու համար, իսկ Հաճախորդը HSBC-ին հայտնում է նման վարույթի գործակալի հասցեն: Եթե Հաճախորդն նման նշանակում չի կատարում, HSBC-ն կարող է Հաճախորդի անունից և նրա հաշվին նշանակել վարույթի գործակալ, և հնարավորինս շուտ, Հաճախորդին տեղեկացնել այդ նշանակման մասին:

ԲՍԺԻՆ 7-ՍԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

26. ՍԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

26.1 Սույն Պայմաններում.

Դիմում նշանակում է Առևտրի ֆինանսավորման ծառայություն ստանալու համար Հաճախորդի դիմում, հրահանգ կամ խնդրանք (իր կամ այլ անձի համար)՝ օգտագործելով դիմումի ձևը, կամ Վարկային համաձայնագրի պայմանների համաձայն կամ Հարթակի միջոցով:

Իշխանությունները ներառում են ցանկացած դատական, վարչական, հանրային կամ կարգավորող մարմին (ներառյալ ինքնակառավարման ցանկացած մարմին), ցանկացած կառավարություն, ցանկացած հարկային մարմին, արժեթղթերի կամ ֆյուչերսների բորսա, ցանկացած դատարան, ցանկացած կենտրոնական բանկ կամ իրավապահ մարմին, կամ նրանց գործակալներից

որևէ մեկը, որոնք ցանկացած ժամանակ իրավասություններ ունեն (ուղղակի կամ անուղղակի) ԷյՋ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած մասի նկատմամբ:

Հաջորդական փաստաթղթային ակրեդիտիվն ունի Կետ 3.14-ում տրված իմաստը:

Աշխատանքային օրը, Առևտրի ֆինանսավորման ծառայությունների կապակցությամբ, նշանակում է այն օրը, երբ կարգավորող օրենսդրական դաշտում բանկերը բաց են ընդհանուր գործունեության համար:

Դրամական միջոցների գրավ ունի Կետ 10-ում տրված իմաստը (*ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ*):

Պահանջ նշանակում է Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ որևէ շահառուի, Հաճախորդի կամ որևէ այլ անձի կողմից ներկայացված ցանկացած պահանջ, խնդրանք՝ վճարման կամ ակցեպտի և վճարման համար, պահանջ, ներկայացում կամ դուրսգրում:

Ինկաստ նշանակում է հավաքագրման գործարք այն Փաստաթղթերի վարման համար, որտեղ HSBC-ն կարող է հանդես գալ որպես փոխանցող բանկ, հավաքագրող բանկ կամ ներկայացման բանկ:

Համապատասխանության գործողությունն ունի Կետ 19-ում տրված իմաստը (*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐ*):

Երկրի պայմանները նշանակում է HSBC-ի լրացուցիչ պայմաններ այն երկրի համար, որտեղ գտնվում է HSBC-ի համապատասխան Առևտրային ծառայություն մատուցող սուբյեկտը:

Հաճախորդ նշանակում է այն անձը, որը դիմում է համապատասխան Առևտրի ֆինանսավորման ծառայության համար, և որի հետ HSBC-ն պայմանագիր է կնքում այդ Առևտրի ֆինանսավորման ծառայության տրամադրման համար (և առանց սահմանափակման, ինչպես կարող է նշվել համապատասխան Դիմումում): Եթե HSBC-ն Առևտրի ֆինանսավորման ծառայություն է մատուցում այն անձին, որը HSBC-ի հաճախորդ չէ, ապա սույն Պայմաններում «Հաճախորդին» կատարված հղումները կիրառվում են այդ անձի նկատմամբ՝ նույնիսկ, եթե այդ անձը HSBC-ի Հաճախորդ չէ:

Հաճախորդի մասին տեղեկատվությունը նշանակում է Հաճախորդի կամ անձի կամ կազմակերպության ցանկացած Անձնական տվյալներ, գաղտնի տեղեկատվություն և/կամ Հարկային տեղեկատվություն (ներառյալ ուղեկցող տեղեկանքները, հրաժարումները և համաձայնությունները), որը (ներառյալ ցանկացած Անձնական տվյալ կամ Հարկային տեղեկատվություն) Հաճախորդի կողմից կամ Հաճախորդի անունից տրամադրվում է ԷյՋ-Էս-Բի-Սի խմբի որևէ անդամին՝ ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայություն մատուցելու համար:

Հաճախորդի պարտավորությունները նշանակում են ցանկացած պահի.

- (ա) HSBC-ի կամ ԷյՋ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած անդամի հանդեպ Հաճախորդի բոլոր պարտավորությունները (ներառյալ ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայություններից և սույն Պայմաններից ծագող կամ վերջիններիս կապակցությամբ), որոնք կատարվել են ցանկացած արժույթով և

ցանկացած ձևով՝ լինի դա ներկա թե ապագա, փաստացի թե պայմանական, ուղղակի թե անուղղակի, ինչպես նաև ինքնուրույն կամ ցանկացած այլ անձի հետ համատեղ,

(բ) նման պարտավորությունների գծով տոկոսագումարները (ինչպես ցանկացած պահանջից կամ վճռից առաջ, այնպես էլ հետո) մինչև այն օրը, երբ HSBC-ն կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի որևէ անդամ ստանում է վճարումը՝ Հաճախորդի կողմից վճարման ենթակա դրույքաչափերով կամ որոնք կվճարվեին, եթե չլինեք վճարումը սահմանափակող որևէ հանգամանք,

(գ) HSBC-ի կամ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ցանկացած անդամի կողմից կատարված ցանկացած ծախս կամ ծախք, որն իրականացվել է Առևտրի ֆինանսավորման ծառայության համաձայն կամ վերջինիս կապակցությամբ Հաճախորդի անունից (սակայն առանց HSBC-ի որևէ պարտավորության)՝ Հաճախորդի կողմից սահմանված ժամկետում կամ պահանջով նման վճարումը չկատարելու պատճառով, և

(դ) HSBC-ի կամ Էյչ-Էս-Բի-Սի խմբի ցանկացած անդամի՝ Առևտրի ֆինանսավորման ծառայության և սույն Պայմանների ներքո կամ կապակցությամբ իր իրավունքները պաշտպանելու կամ իրականացնելու բոլոր ծախսերը (ներառյալ լիարժեք փոխհատուցման հիմքով իրավաբանական ծառայությունների բոլոր վճարները):

Փաստաթղթային ակրեդիտիվ նշանակում է փաստաթղթային ակրեդիտիվ կամ ակրեդիտիվ կամ փաստաթղթային ակրեդիտիվ կամ ակրեդիտիվ թողարկելու ցանկացած պարտավորություն (ներառյալ դրանց ցանկացած երկարաձգում, նորացում կամ փոփոխություն):

Փաստաթղթեր են հանդիսանում ցանկացած վճարագիր, փոխանցելի մուրհակ, հասարակ մուրհակ, չեկեր, սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, հավաստագրեր, հաշիվ-ապրանքագրեր, քաղվածքներ, տրանսպորտային փաստաթղթեր, ապահովագրական պոլիսներ, պահեստային անդորրագրեր կամ առևտրային գործարքին վերաբերող նմանատիպ այլ գործիքներ, որոնց կապակցությամբ HSBC-ն Հաճախորդին Առևտրի Ֆինանսավորման ծառայություն(ներ) է մատուցել:

Էլեկտրոնային միջոցներ ունի Կետ 20-ում տրված իմաստը (ՀՐԱՀԱՆԳՆԵՐ):

Փոխարժեք նշանակում է HSBC-ի ընթացիկ փոխարժեքը (կամ եթե HSBC-ն չունի համապատասխան արժույթի ընթացիկ փոխարժեք՝ HSBC-ի կողմից ընտրված որևէ այլ հանրամատչելի ընթացիկ փոխարժեք) համապատասխան արժույթի շուկայում համապատասխան պահին պահանջվող արժույթի ձեռքբերման համար՝ օգտագործելով այն արժույթը, որով կատարվել է համապատասխան վճարումը (եթե HSBC-ն, սովյալ հանգամանքներում ողջամտորեն գործելով ընտրում է որևէ նման ընթացիկ փոխարժեք):

Արտաքին մատակարար նշանակում է անձ (բացառությամբ HSBC-ի), որը ցանկացած Հարթակ հասանելի է դարձնում HSBC-ի և/կամ Հաճախորդի համար:

Արտաքին պայմաններ նշանակում է ցանկացած համաձայնություն, որը ձեռք է բերվում Արտաքին մատակարարի և կա'մ HSBC-ի, կա'մ Հաճախորդի միջև, որը սահմանում է HSBC-ի կամ Հաճախորդի կողմից Հարթակի օգտագործման համար կիրառվող պայմանները:

Վարկային համաձայնագիր նշանակում է Հաճախորդի և HSBC-ի միջև նամակ կամ համաձայնագիր, որի ներքո HSBC-ն համաձայնում է Հաճախորդին Առևտրի Ֆինանսավորման ծառայությունների կապակցությամբ վարկ տրամադրել:

Ֆինանսավորում նշանակում է զեղչում, բանակցում, գնում, կանխավճար, վաղաժամկետ վճարում կամ Փաստաթղթի (անկախ Փաստաթղթային ակրեդիտիվի կամ Բնկատյի համաձայն ձևակերպված լինելուց) կամ Փաստաթղթային ակրեդիտիվի հաստատում, իսկ «**Ֆինանսավորված**» և «**Ֆինանսներ**» բառերը պետք է մեկնաբանվեն համապատասխանաբար: Կասկածից խուսափելու համար, ֆինանսավորումը չի ներառում Առևտրի ֆինանսավորման վարկը:

Ապրանքներ նշանակում է Առևտրային գործարքի առարկա հանդիսացող ապրանք կամ արտադրանք, որոնց կապակցությամբ HSBC-ն Հաճախորդին տրամադրել է Առևտրի ֆինանսավորման ծառայություն(ներ):

Կարգավորող օրենսդրական դաշտ նշանակում է իրավական դաշտ, որի ներքո գտնվում է Առևտրային ծառայություն մատուցող համապատասխան սուբյեկտը կամ Հաճախորդի և HSBC-ի միջև գրավոր համաձայնեցված կամ համապատասխան երկրի պայմաններով սահմանված նման այլ իրավասության ոլորտ:

HSBC նշանակում է համապատասխան Առևտրային ծառայություն մատուցող Էյչ-Էս-Բի-Սի խմբի անդամ (կամ, եթե կիրառելի է, Էյչ-Էս-Բի-Սի խմբի նման անդամի մասնաճյուղ) և նրա իրավահաջորդներն ու լիազորված գործակալները, որտեղ թույլ է տալիս համատեքստը, ներառում է ցանկացած անձ, որը նշանակվել է HSBC-ի կողմից՝ համաձայն Կետ 23.1(ա) (*ԲՄՅԱՅՄՅՏՈՒՄ, ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ*):

Էյչ-Էս-Բի-Սի խումբ նշանակում է Էյչ-Էս-Բի-Սի հողինգը և ժամանակ առ ժամանակ նրա դուստր ընկերություններն ու մասնաճյուղերը:

ԱՄՊ նշանակում է Առևտրի միջազգային պալատ:

Աճող ծախսեր նշանակում է Առևտրի ֆինանսավորման ծառայությունից կամ HSBC-ի ընդհանուր կապիտալից շահութաբերության նվազեցում, հավելյալ կամ աճող ծախս կամ սույն Պայմաններով կամ Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ վճարման ենթակա որևէ գումարի նվազեցում, որը կրել է HSBC-ն այն չափով, որքանով դա վերաբերում է HSBC-ի կողմից սույն Պայմաններին կամ Առևտրի ֆինանսավորման ծառայությանը համապատասխան իր պարտավորությունների կատարմանը:

Փոխհատուցվող կողմն ունի Կետ 9-ում տրված իմաստը (*ՓՈՒՆՀԱՏՈՒՅՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ*):

Հրահանգն ունի Կետ 20-ում տրված իմաստը (*ՀՐԱՀԱՆԳՆԵՐ*):

Գործիք նշանակում է ցանկացած ՊՓԱ, ցպահանջ երաշխիք (ներառյալ ավալը, փաստաթղթի համատեղ ակցեպտը կամ ընդունումը), պարտատոմս, հակընդդեմ երաշխիք, հակընդդեմ ՊՓԱ կամ նմանատիպ անկախ վճարման պարտավորություն (ներառյալ դրանց ցանկացած երկարաձգում, նորացում կամ փոփոխություն):

Վնասներն ունի Կետ 9-ում տրված իմաստը (*ՓՈԽՀՍՏՈՒՅՈՒՄ ԵՎ ՎՆԱՍԻ ՀՍՏՈՒՅՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ*):

Հիմնական փաստաթղթային ակրեդիտիվն ունի Կետ 3.14-ում () տրված իմաստը:

Անձնական տվյալներ նշանակում է անհատի հետ կապված ցանկացած տեղեկատվություն, որի միջոցով կարող է նույնականացվել տվյալ անհատը, այդ թվում՝ գաղտնի անձնական տվյալներ, անուն(ներ), բնակության հասցե(ներ), կոնտակտային տվյալներ, տարիք, ծննդյան ամսաթիվ, ծննդյան վայր, ազգություն, քաղաքացիություն, անձնական և ամուսնական կարգավիճակ:

Հարթակ նշանակում է ցանկացած էլեկտրոնային հարթակ, (ա) որն օգտագործվում է HSBC-ի, Հաճախորդի կամ որևէ այլ անձի կողմից ցանկացած Առևտրի ֆինանսավորման ծառայության վերաբերյալ որևէ հրահանգ, պահանջ կամ այլ հաղորդագրություն տրամադրելու կամ ստանալու համար և/կամ (բ) որն օգտագործվում է HSBC-ի կամ որևէ այլ անձի կողմից ցանկացած առևտրային ծառայություն թողարկելու կամ տրամադրելու համար և ներառում է HSBCnet-ը:

Ռեզրևի դեպք Առևտրի ֆինանսավորման ծառայության իմաստով նշանակում է.

(ա) Հաճախորդի և/կամ Առևտրային գործարքի ցանկացած այլ կողմի սխալ ներկայացում, ենթադրյալ կամ փաստացի խարդախություն, ապօրինություն կամ չարտոնված գործողություն,

(բ) Փաստաթղթային ակրեդիտիվի, ՊՓԱ-ի, Փաստաթղթ(եր)ի կամ Առևտրային գործարքի ցանկացած ենթադրյալ կամ փաստացի անվավերություն, անհամապատասխանություն կամ չկատարում (կախված հանգամանքներից), կամ

(գ) ցանկացած դատական արգելք, դատարանի հրաման, օրենք, որոշում կամ Պատժամիջոց, որոնք սահմանափակում են որևէ վճարում (լինի դա HSBC-ին կամ HSBC-ի կողմից և/կամ հետագայում մարված):

ՊՓԱ նշանակում է պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ:

ՊԱ նշանակում է պահուստային ակրեդիտիվ (որը ներառում է ՊՓԱ):

Պատժամիջոցն ունի Կետ 19-ում տրված իմաստը (*ՀՄՄԱՊԱՍԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏՃԱՄԻՋՈՅՆԵՐ*):

Ապահովման համաձայնագիր նշանակում է ցանկացած փաստաթուղթ, որը ստեղծում է Հաճախորդի ցանկացած իրավունքի և/կամ ակտիվների հաշվին ապահովում կամ ենթադրյալ ապահովում՝ ի կատարումն ցանկացած պարտավորության, որը Հաճախորդը կարող է ժամանակ առ ժամանակ ունենալ HSBC-ի խմբի ցանկացած անդամի նկատմամբ:

Սակագներ նշանակում է, եթե դա կիրառելի է համապատասխան իրավական դաշտում, HSBC-ի սակագնային գիրքը/փաստաթուղթը, որտեղ նշվում են HSBC-ի Առևտրի ֆինանսավորման ծառայությունների վարձավճարները, միջնորդավճարները, տոկոսադրույքները և այլ դրույքաչափերը, որոնք հասանելի են Հաճախորդի պահանջով և/կամ կարող են հասանելի լինել առցանց:

Հարկը ներառում է ապրանքների և ծառայությունների հարկը, ավելացված արժեքի հարկը, վաճառքի հարկը, դրոշմանիշային վճարը կամ ցանկացած հարկ, գանձում, պարտադրանք, նվազեցում, վճար, տոկոսադրույք, տուրք, պարտադիր մարմամբ վարկ կամ պահում, որը գանձվում կամ պարտադրվում է պետական մարմնի կողմից, ինչպես նաև ցանկացած փոխկապակցված տոկոսագումար, տուգանք, վճար, տուրք կամ այլ վճար (սակայն չի ներառում HSBC-ի ընդհանուր գուտ եկամուտի հարկը):

Հարկային տեղեկատվություն նշանակում է ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն (ինչպես նաև ուղեկցող տեղեկանք, հրաժարում և համաձայնություն), որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում է Հաճախորդի հարկային կարգավիճակին և ցանկացած սեփականատիրոջ, «վերահսկող անձի», «հիմնական սեփականատիրոջ» կամ Հաճախորդի շահառու սեփականատիրոջ հարկային կարգավիճակին:

Առևտրի ֆինանսավորման վարկ նշանակում է HSBC-ի կողմից Հաճախորդին տրամադրվող փոխառություն, կանխավճար, վարկ կամ այլ ֆինանսական աջակցություն Առևտրային գործարքի կապակցությամբ:

Առևտրի ֆինանսավորման ծառայությունը ներառում է.

- (ա) Փաստաթղթային ակրեդիտիվի թողարկումը և ցանկացած ծանուցող բանկի, ներկայացման բանկի կամ հաստատող բանկի հրահանգավորումը տվյալ Փաստաթղթային ակրեդիտիվի նկատմամբ,
- (բ) Փաստաթղթային ակրեդիտիվի կապակցությամբ որպես ծանուցող բանկ, ներկայացման բանկ կամ հաստատող բանկ (բացահատվող կամ չբացահայտվող հիմքով) հանդես գալը,
- (գ) Գործիքի թողարկումը և/կամ ցանկացած թղթակից բանկի հրահանգավորումը հակընդդեմ երաշխիքի, հակընդդեմ ՊՓԱ կամ վնասի հատուցման պարտավորության կապակցությամբ և դրանց թողարկումը կապված Գործիքի հետ,
- (դ) Գործիքի նկատմամբ որպես ծանուցող բանկ, թղթակից բանկ կամ հաստատող բանկ հանդես գալը,
- (ե) Փաստաթղթային ակրեդիտիվի, Գործիքի կամ Փաստաթղթի վարումը,
- (զ) Ինկասոն,
- (է) ցանկացած Ֆինանսավորման տրամադրումը,
- (ը) Առևտրի ֆինանսավորման վարկի տրամադրումը,

(թ) վնասի հատուցման պարտավորագրի կամ բեռնափոխադրման երաշխիքի թողարկումը և/կամ ցանկացած Տրանսպորտային փաստաթղթի ստորագրումը, հաստատումը կամ տրամադրումը,

(ժ) Փաստաթղթերի բացթողումը,

(ի) HSBC-ի կողմից Հաճախորդին տրամադրված Առևտրային գործարքին վերաբերող ցանկացած այլ ծառայություն կամ պրոդուկտ, որը տրամադրվել է Հաճախորդի խնդրանքով կամ վերջինիս կապակցությամբ:

Առևտրային գործարք նշանակում է գործարք, որը ներառում է Հաճախորդի կողմից ապրանքների կամ ծառայությունների գնումը/օտարումը երրորդ կողմից/համար և ներառում է ցանկացած պայմանագիր(պայմանագրեր), որի (որոնց) վրա կարող է հիմնվել նման գործարքը:

Տրանսպորտային փաստաթղթերն ունեն Կետ 8-ում տրված իմաստը (*ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ, ԲԵՌՆԱՓՈՒՄԱՂՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐ*):

ԱՄՆ դոլար նշանակում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինական արժույթը:

26.2 Եթե այլ բան նշված չէ, սույն Պայմանների ներքո ցանկացած հղում հետևյալին.

(ա) Դիմում կամ Առևտրային ծառայություն (և ցանկացած հղում Առևտրի ֆինանսավորման ծառայության Դիմումում) ներառում է (որտեղ կիրառելի է) Հաճախորդի և HSBC-ի միջև պայմանագրի ստեղծումը՝ HSBC-ի կողմից այդ Դիմումը ընդունելու, տվյալ Առևտրի ֆինանսավորման ծառայությունը տրամադրելու կամ հանձնառելու միջոցով,

(բ) Հաճախորդ, HSBC կամ ցանկացած այլ անձ պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի ներառի իր իրավահաջորդներին, թույլատրված ցեսիոներներին, որոնք սույն Պայմանների, Դիմումի, Վարկային համաձայնագրի կամ Երկրի պայմանների ներքո ստանձնել են իրենց այդ իրավունքները և/կամ պարտականությունները,

(գ) ներառում կամ ներառյալ բառերը նշանակում են ներառում կամ ներառյալ՝ «առանց սահմանափակման»,

(դ) HSBC-ն, որը սահմանում է կամ որոշում է կայացնում կամ գործողություն է նախաձեռնում, նշանակում է, որ HSBCը կատարում կամ նախաձեռնում է, և նրան թույլատրվում է կատարել կամ նախաձեռնել նման սահմանում, որոշում կամ գործողություն իր հայեցողությամբ կամ իր կարծիքով՝ առանց Հաճախորդի կամ որևէ այլ անձին հղում կատարելու կամ նրա համաձայնության,

(ե) Հաճախորդի թույլտվությունը կամ հաստատումը կամ հրահանգը նշանակում է, որ նման թույլտվությունը, հաստատումը կամ հրահանգն անհետկանչելի է, եթե HSBC-ն չի հրաժարվում դրանից,

(զ) որևէ անձ ներառում է ցանկացած ֆիզիկական անձ, կազմակերպություն ընկերություն, կորպորացիա, կառավարություն, պետություն կամ պետական մարմին կամ ցանկացած ասոցիացիա, հավատարմագրային կառավարիչ, համատեղ ձեռնարկություն, կոնսորցիում, գործընկերություն կամ այլ անձ (անկախ իրավաբանական անձ ձևավորելու փաստից),

(է) կանտոնակարգը ներառում է ցանկացած պետական, միջպետական կամ վերազգային մարմնի, գործակալության, վարչության կամ ցանկացած կարգավորող, ինքնակառավարման կամ այլ իշխանական մարմնի կամ կազմակերպության ցանկացած կանտոնակարգ, կանոն, պաշտոնական հրահանգ, պահանջ կամ ուղեցույց (օրենքի ուժ ունեցող կամ չունեցող),

(ը) սույն Պայմանները ներառում են սովյալ Երկրի պայմանները,

(ե) սույն Պայմանները կամ ցանկացած այլ համաձայնություն կամ գործիք վերաբերում են սույն Պայմաններին, կամ կախված հանգամանքներից, ժամանակ առ ժամանակ փոփոխված, լրացված, նորացված և/կամ փոխարինված այլ համաձայնությանը կամ գործիքին,

(ե) եզակի թիվը ներառում է հոգնակի թիվը և հակառակը,

(ե) բաժինների և կետերի վերնագրերը նախատեսված են միայն հղումը հեշտացնելու համար:

26.3 Բացի յուրաքանչյուր Դիմումի բաղկացուցիչ մասը լինելուց, սույն Պայմանները կարող են HSBC-ի կողմից ներառվել նաև Վարկային համաձայնագրում կամ որևէ այլ փաստաթղթում կամ համաձայնագրում:

ԱՌԵՎՏՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ GTRF
ԵՐԿՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆ

1. ԴԻՄՈՒՄ

1.1.1 Սույն Երկրի Պայմանները լրացնում են Առևտրի ստանդարտ պայմանները GTRF (**Պայմաններ**) և կազմում են դրա մասը, որոնք Հաճախորդն ընդունել է և/կամ կարող է ժամանակ առ ժամանակ ընդունել:

1.1.2 Պայմանների ներքո սահմանված կամ մեկնաբանված ցանկացած սահմանում սույն Երկրի պայմաններում օգտագործելիս ունի նույն իմաստը (եթե դրանք այլ կերպ սահմանված չեն տվյալ Երկրի Պայմաններում):

1.1.3 Սույն Երկրի պայմանները կիրառվում են այն դեպքում, երբ Էյչ-Էս-Բի-Սի ընկերությունը, որը տրամադրում է համապատասխան Առևտրային ծառայությունները, գտնվում է վերը նշված երկրում:

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Եթե Առևտրի ֆինանսավորման ծառայության կապակցությամբ Հաճախորդի կողմից HSBC-ին վճարման ենթակա որևէ գումար հաշվարկվում է հրապարակված ուղեցույցային դրույքաչափի (օրինակ՝ Կենտրոնական բանկի բազային դրույքաչափի) հիման վրա, և այդ դրույքաչափը հաշվարկման պահին զրո տոկոսից պակաս է, ապա այդ դրույքաչափը դիտարկվում է որպես զրո տոկոս: